



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԸ

Ինչ է Գաղտնիքը՝ Թրամփ-Էրտոդան Սերտ Յարաբերութեան

Այս շաբաթ լոյս տեսաւ նախագահ Տամուտ Թրամփի ազգային ապահովութեան նախկին խորհրդական ճոն Պոլթընի՝ «Սենեակը Յոն Ուր Այդ Պատահեցաւ» յուշերու մեծածաւալ հատորը: Սպիտակ Տունը դիմելով դատարան փորձեց արգիլել գրքի հրատարակութիւնը, այն պատճառաբանութեամբ որ, հոն կը բացայայտուին պետական գաղտնիքներ, սակայն դատարանը ընթացք չտուաւ այդ դիմումին:

Ճոն Պոլթըն Ազգային Անվտանգութեան խորհրդականի պաշտօնին վրայ գտնուեցաւ 18 ամիս՝ 2018-ի Ապրիլէն, 2019-ի Սեպտեմբեր Ամիսը: Պոլթըն յայտարարեց թէ ինք հրաժարած է, սակայն Թրամփ կը պնդէ որ, ան պաշտօնագրի եղած է: Ի՞նչ որ ալ ըլլան պարագաները, Թրամփ-Պոլթըն աղմկայարոյց խզումը նախագահական ընտրութիւններէն չորս ամիս առաջ նոր գլխացաւանք մը դարձած է Թրամփի համար: Այս օրերուն Պոլթըն գիրքը կը գտնուի հանրութեան ուշադրութեան կեդրոնին եւ հեղինակը իր հեռախոսակալին հարցազրոյցներու ընթացքին կ'զգուշացնէ Ամերիկայի ժողովուրդին եւ յատկապէս իր կուսակից Յանրապետականներուն, որ Թրամփ արժանի չէ վերընտրութեան եւ աւելին՝ վտանգ է Ամերիկայի ազգային շահերուն:

Ճոն Պոլթընի յուշերուն մէջ կան բազմաթիւ զգայացունց նորութիւններ, սակայն մասնաւոր ամենէն աւելի կ'անդրադառնայ երկու դրուագներու՝ կապուած Չինաստանի եւ Թուրքիոյ հետ: Պոլթըն կը պատմէ թէ ինչպէս նախագահ Թրամփ աղաչած է Չինաստանի նախագահ Չի Ճինքինկին, որպէսզի ան օգնէ իրեն՝ վերընտրուելու համար: Թրամփ խնդրած է որ, Չինաստան մեծաքանակ գնումներ կատարէ Ամերիկացի հողագործներէն, որպէսզի ապահովէ անոնց քուէները:

Պոլթըն իր յուշերուն մէջ կը պատմէ նաեւ Ամերիկայի եւ Թուրքիոյ նախագահներուն միջեւ 2018-ին տեղի ունեցած հեռաձայնային զրոյցի մասին, որուն ընթացքին նախագահ Էրտոդան ուզած է որ, Ամերիկացի դատախազները դադարեցնեն Թրքական մեծագոյն դրամատունէն մէկը նկատուող Յալք-Կանքի դէմ դատական գործերը: Յալք-Կանք կ'ամբաստանուի Ամերիկեան պատժամիջոցները շրջանցելով Իրանի հետ 20

Սահմանադրական Փոփոխութիւններու Նախագիծը Ընդունուեցաւ Հայաստանի Խորհրդարանի Կողմէ



Հայաստանի Ազգային ժողովի դահլիճը՝ Յունիս 22-ի նիստի ընթացքին. դատարկ են «Բարգաւաճ Հայաստան» եւ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւններու աթոռները

Յունիս 22-ին, Հայաստանի Ազգային ժողովը վաւերացուց սահմանադրական փոփոխութիւններու նախագիծը՝ 89 կողմ ձայնով, առանց դէմ եւ ձեռնպահ ձայներու: Ընդդիմադիր «Բարգաւաճ Հայաստան» եւ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւնները քուէարկութեան չեն մասնակցած:

Այս փոփոխութիւնները կու գան փոխարինելու յետաձգուած սահմանադրական հանրաքուէն: Նախագիծով առաջարկուած

է դադարեցնել 12 տարին աւելի պաշտօնավարած Սահմանադրական Դատարանի դատաւորներու լիազօրութիւնները եւ թափուր տեղերը լրացնել յետոյ կազմակերպել դատաւորներու կողմէ Սահմանադրական դատարանի նախագահի ընտրութիւն: Այդպիսով կը դադարեցուի ՍԳ-ի նախագահ Հրայր Թովմասեանի պաշտօնավարումը: Նախագիծը խորհրդարանի

Հակառակ Թուրքիոյ Ընդուններուն Եզմարտութիւնը Հարթելու է Իր Ճանապարհը

Որքան ալ, որ Թուրքիոյ իշխանութիւնները ջանքեր գործադրեն ճնշելու ճշմարտութիւնը, ամէն պարագային ճշմարտութիւնը հարթած է եւ պիտի հարթէ իր ճանապարհը: Այս մասին ըսաւ Արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Աննա Նաղտալեան, մեկնաբանելով Թուրքիոյ նախագահական մակարդակով Հայոց ցեղասպանութեան հարցով քննարկումը:

«Թուրքիոյ նախագահի կողմից Հայոց ցեղասպանութեան արդարացման եւ դրանց գոհերին վիրաւորելու յայտարարութիւնները նորութիւն չեն եւ իրենից ներկայացնում են ատելութեան խօսքի դրսեւորումներ, որոնք իրենց ազդեցութիւնն են ունենում այդ երկրում հայերի հանդէպ այլատեսացութեան մթնոլորտի պահպանման եւ ամրապնդման վրայ», - ըսած է Արտաքին Գործոց նախարարի խօսնակը:

Նաղտալեան նշեց, որ Հայոց

Հասանով. «Սահմանին Տեղադրուած Ամերիկեան Սարքաւորումներու Պատճառով Չենք Կրնար Հրազնով Թիրախաւորել Հայերը»

«Ազատութիւն» ռատիոկայանի հաղորդմամբ՝ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար՝ Զաքիր Հասանով յայտարարած է որ, վերջին երկու տարիներուն չփոփոխուած իր նկատուող համեմատական անդորրի գլխաւոր պատճառներէն մէկը Հայաստանին մատակարարուած ամերիկեան պաշտպանական սարքերն են: Այս մասին Ատրպէյճանի ռազմական գերատեսչութեան ղեկավարը յայտարարած է Կիրակի օր՝ Պաքուէն հեռարձակուող ռուսալեզու CBC կայանի եթերով:

«Հայերը, Միացեալ Նահանգներ գտնուող իրենց հովանաւորներու շնորհիւ, ռազմական նշանակութեան սարքաւորումներ ձեռք բերած են եւ տեղադրած են զանոնք ռազմաճակատի գիծի երկայնքով: Խօսքը՝ դիտարկութեան համակարգերի մասին է: Հայերը այդ սարքաւորումները տեղադրած են յետ քաշուած են, որպէսզի մենք չկրնանք գիրենք թիրախաւորել հրաձգային գէնքով», - յայտարարած է Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարը:

Ատրպէյճանական հեռուստակայանին հետ հարցազրոյցի ըն-

թացքին, Զաքիր Հասանով թափանցիկ կերպով ակնարկած էր իր ենթակալութեան տակ գտնուող ստորաբաժանումներու աշխուժ քայլերը կաշկանդող եւս մէկ գործօնի մասին: Խօսքը՝ առաջնադիրին վրայ տեղակայուած Ատրպէյճանական զօրքերու թիւուն քին, յենակէտերու անմիջական հարեւանութեամբ գտնուող բնակավայրերու մասին է: Ըստ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարին՝ այս առումով հայերը աւելի շահեկան դիրքի մէջ են: «Հայկական կողմէն չփոփոխուած իր կայանքով բնակավայրեր չկան», - նշած էր Հասանովը:

Ըստ Հասանովի, Ատրպէյճանական բանակը կը շարունակէ զօրավարութիւններուն ընթացքին, սեփական կարիքներուն յարմարեցնել այն սպառազինութիւնը, որ ձեռք բերուած է վերջին տարիներուն մէջ, Սպանիայէն մինչեւ Ռուսաստան, Իսրայէլէն՝ Պելաուսիա: Զաքիր Հասանովի խօսքով՝ ի դէպ, միայն ռուսական եւ իսրայէլական արտադրութեան զէնքերու ձեռքբերման վրայ, Ատրպէյճանը 10 միլիառ ամերիկեան տոլար ծախսած է:

30 Տարի Ըսած են, Պայքարեցէք Քորուփցիայի Դէմ, Հիմա Կ'ըսեն՝ Ինչո՞ւ Ընդդիմութիւնը Կը Ընշէք. Նիկոլ Փաշինեան

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձած է վերջին օրերուն Հայաստանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններու առնչութեամբ միջազգային արձագանգին: Ան նշած է, որ 30 տարի Հայաստանին ըսած են՝ պայքարեցէք քորուփցիայի, ընտրակաշառքներու եւ ընտրակեղծիքներու դէմ, իսկ հիմա, որ իսկական պայքար սկսած է, կ'ըսեն՝ ընդդիմութիւնը ինչո՞ւ կը ճնշէք: «Բա 30 տարուայ քորուփցիոնները հիմա ընդդիմութիւն են: Դա շատ լաւ ձեւ է՝ ես ընդդիմութիւն եմ, ինձ բան մի սասէք», - «Արմէնիքս»-ի փոխանցումով՝ ըսած է վարչապետը:

Յունիս 17-ին Եւրոպական ժողովրդական կուսակցութեան (ԵԺԿ) նախագահ՝ Տոնալտ Թուսկի Թուրքիայի իր էջով անդրադարձած է Հայաստանին եւ նշած, թէ «ԵԺԿ-ն մտահոգուած է Հայաստանի մէջ ժողովրդավարական հետընթացի բազմաթիւ օրինակներով եւ կոչ կ'ընէ Հայաստանի իշխանութիւններուն զերծ մնալ ընդդիմութեան նկատմամբ ճնշումներէն»:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ուլթե՞Ր ԵՆ Փորձում Ծառուկեանի Ձեռքով Կրակից Շագանակներ Հանել

ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկեանի շուրջ ծառայող իրադարձութիւնները հերթական անգամ բացայայտեցին այն խորքային խնդիրները, որոնք առկա են Հայաստանի ներքաղաքական կեանքում: Յարուցուած քրէական գործերի շուրջ մեծ աղմուկ բարձրացաւ, բայց ակնյայտ էր, որ Ծառուկեանի ձախառնումը որեւէ մէկին առանձնապէս չի յուզում: Քաղաքական ուժերը պարզապէս շտապեցին օգտագործել այդ առիթը՝ քաղաքական դիվիդենտներ շահելու համար, ու բանն այնտեղ հասաւ, որ անգամ ՀՀԿ-ն, որ ժամանակին Գագիկ Ծառուկեանի քաղաքական յաւակնութիւնները գնահատում էր որպէս «հայրենիքը կրկէսի վերածելու» փորձ, հիմա այս ամէնը գնահատեց որպէս նրա նկատմամբ իրականացուող քաղաքական հետապնդում եւ հանդէս եկաւ յայտարարութեամբ ու կառավարութեան հրաժարականի պահանջով: Ըստ երեւոյթի չափազանց մեծ է նրա նիւթական միջոցներով ու կողմնակիցների ձեռքերով կրակից շագանակ հանելու գայթակղութիւնը:

Ինչ վերաբերում է այդ քրէական գործերը քաղաքական հետապնդում անուանելուն, ապա դա, ի հարկէ, միանգամայն հասկանալի է ու բխում է ժանրի կանոններից, ու հագիւթ է արժէ ակնկալել, որ որեւէ մէկն անկեղծօրէն կը յայտարարի, թէ այս ամէնը չի կարող քաղաքական հետապնդում լինել այն պարզ պատճառով, որ Գագիկ Ծառուկեանն ըստ էութեան միշտ էլ միայն անունով է եղել քաղաքական գործիչ: Իրականում նա խոշոր գործարար է (գուցէ նոյնիկ Հայաստանում ամենախոշորը), որը պարզապէս ի թիւս այլ ուղորտների՝ մեծ ներդրումներ է արել նաեւ քաղաքականութեան ոլորտում: Այնպէս, ինչպէս ներդրումներ է արել, ասենք, գիւղատնտեսութիւնում, շինարարութիւնում, հանքարդիւնաբերութիւնում, խաղատնային բիզնեսում եւ այլն:

Թէ ինչու է այդպիսի ներդրում արել՝ իր իմանալիքն է: Գուցէ համարել է, որ դա նպաստաւոր պայմաններ կը ստեղծի իր բիզնես-կայրութեան համար, գուցէ ցանկացել է պարզապէս նաեւ պետական այրի կարգավիճակ ունենալ ու պատրաստ է եղել վճարել դրա

համար, բայց տուեալ դէպքում դա այնքան էլ հական չէ: Առաւել եւս, որ ինչպէս բիզնեսի ցանկացած ոլորտում, այնպէս էլ քաղաքականութեան մէջ ֆինանսական ներդրումներ անելը հակօրինական չէ: Ցանկացած մեծահարուստ կարող է կուսակցութիւն հիմնել, երկրով մէկ գրասենեակներ բացել, լրատուամիջոցներ հիմնել եւ այլն, ու այդ ամէնը կը լինի միանգամայն օրինական: Այլ հարց է, որ ինչպէս բիզնեսի ցանկացած ոլորտում, այնպէս էլ քաղաքականութեան մէջ գործում են յստակ օրէնքներ ու մրցակցային կանոններ, եւ դրանք խախտողները ենթակա են քրէական պատասխանատուութեան: Օրինակ՝ որեւէ ընկերութիւն կարող է մասնակցել շինարարական տենդերի ու փորձել յաղթել ներկայացուած լաւ առաջարկի շնորհիւ, բայց չի կարելի կաշառք տալ՝ մրցոյթում յաղթելու համար: Նոյն կերպ էլ՝ կարելի է մասնակցել ընտրութիւնների եւ փորձել յաղթել, բայց չի կարելի ընտրակաշառք բաժանել կամ փողով մարդկանց քշել հանրահաւաքների:

Այլ կերպ ասած՝ խնդիրն այն չէ, որ Գագիկ Ծառուկեանն իր հակայական ֆինանսական կարողութիւններով մտել է քաղաքականութիւն, խնդիրն այն է, որ նա այդ ներքաղաքական պայքարում քրէօրէն պատժելի արարքներ է կատարել (յամենայն դէպս՝ ըստ ներկայացուած մեղադրանքի): Հիմա՝ հարց. եթէ նրան մեղադրուող քրէական յանցագործութիւնը կատարուել է ոչ թէ, ասենք, շինարարութեան կամ առեւտրի, այլ քաղաքականութեան ոլորտում, նշանակու՞մ է դա արդեօք, որ այդ առիթը յարուցուած գործը քաղաքական է:

Իսկ ընդհանրապէս՝ այնքան էլ հաճելի չէ տեսնել, թէ ինչպէս են ընդդիմադիր քաղաքական ուժերը «փուռը տալիս» Գագիկ Ծառուկեանին, տարբեր անկիւններից խրատուած, «թասիբի գցում» ու թաքուն հրճում՝ յոյս ունենալով նրա միջոցով թուլացնել գործող իշխանութիւններին, որպէսզի յետոյ աւելի հեշտութեամբ իրականացնեն իրենց ծրագրերը (որոնցում Ծառուկեանը վստահաբար իր տեղը չունի):

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Բարուն Խոստովանեց, Թէ Ինչու Չի Յարձակոււմ

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Ադրբեջանի պաշտպանութեան նախարարը տրտնջացել է հայկական զինուժի խորքային հետախուզութեան կարողութիւնից, ասելով, թէ դա ապահովուել է «հայերի հովանաւոր ԱՄՆ» աջակցութեամբ: Գեռեւս 2017 թուականին Լրագրի հետ հարցազրոյցում այդ տեխնոլոգիաների մասին ազդարարել էր Արկադի Տէր-Թադեոսեանը՝ Կոմանդոսը, նշելով, որ ապրիլեանից յետոյ առաջնագծում տեղակայուել են ամերիկեան տեսադիտարկման սարքերը: Դրանք թոյլ են տալիս մեծ խորութեան վրայ արձանագրել հակառակորդի շարժն ու կասեցնել այն «արմատից»: Այդ տարիներին Բաքուն ունեցել է դրանում համոզուելու բազմաթիւ ցաւոտ առիթներ, ինչպէս օրինակ 2017 թուականի Փետրուարի 25-ին, երբ Արցախի դիրքապահները ոչնչացրին դիվերսիայի անցնող էլիտար ստորաբաժանումը:

Չաքիր Հասանովի տրտունջի խորքային պատճառը սակայն անշուշտ դա չէ: Բաքում երբեք չեն տրտնջում սեփական զոհերի կապակցութեամբ, քանի որ դրանք արժէք չունեն Ադրբեջանի ղեկավարութեան համար: Հակառակ պարագայում ռազմական դիւանագիտութեան փոխարէն Ալիեւը վաղուց ձեռնամուխ կը լինէր առանց նախապայմանի խաղաղութեան շուրջ քննարկումների:

Չաքիր Հասանովի տրտունջի պատճառն այն է, որ հայկական կողմին խորքային տեսադիտարկման սարքերի մատակարարումը քաղաքական իմաստով հաւասարագոր է վիեննայի օրակարգի կեանքի կոչմանը, ի հարկէ մասնակի, սակայն սկզբունքային առումով: Ինչպէս յայտնի է, այդ օրակարգը ենթադրում է հրադադարի խախտման տեսադիտարկման եւ միջազգային քննութեան մեխանիզմ:

Բաքուն հրաժարուել է դրանից, յայտարարելով, որ այդ մե-

մերժուեց, մտածում է՝ ինքը ինչ պակաս կազմակերպիչ է, հիմա էլ մի շարժում ինքը կը ձեւաւորի եւ Փաշինեանին կը հեռացնի իշխանութիւնից: Իսկ եթէ ինքը հեռացնի, պարզ է, որ հէնց ինքն էլ կը հաւակնի դառնալ Հայաստանի ղեկավար:

Իրականում, մինչեւ այս պահը հայ ժողովուրդը չափազանց ներողամիտ է եղել Սարգսեանի հանդէպ: Ընդամէնը հեռացրել է պաշտօնից՝ թողնելով վայելել միլիոնները: Մէկ էլ մի քրէական գործ է յարուցուած, ընդամէնը 1 միլիոն դոլար իւրացնելու համար: Հաշուի առնելով Հայաստանի դատական համակարգը՝ կարելի է եզրակացնել, որ այն տարիներով կը քննուի, ատենախոսուեան կը գնայ եւ Աստուած գիտի, թէ երբ դատավճիռ կը լինի:

Բայց կարծես թէ Սարգսեանի սիրտը արկածախնդրութիւն է ուզում: Այս անգամ թերեւս ժողովուրդը չբաւարարուի նրան միայն Մելիք-աղամեանի օֆիսից վտարելով եւ գնաւ աւելի հեռու, ասենք՝ հասնի Ձորաղբերի ամառանոցներ:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

խանիզմը դէ ֆակտոյ ստատուս-քվոյի ճանաչում է: Բաքուի հրաժարման «հովանավորը» Մոսկուան է, քանի որ այդ մեխանիզմի արձանագրումը նշանակելու է, որ չեղարկուած է Մոսկուայի պարեկային գերակայութիւնը, եւ իրավիճակի կառավարումը ներառուած է միջազգային իրաւա-քաղաքական պատասխանատուութեան շրջանակ: Այսինքն, Ռուսաստանը կը գրկուի Հայաստանի եւ Ադրբեջանի հանդէպ լծակից:

Հայ-ամերիկեան գործակցութիւնը տեսադիտարկման հետախուզական սարքերի առումով ապահովել է մի իրավիճակ, երբ հայկական զինուժը ստանում է ոչ միայն խորքային հետախուզութեան կանխարգելիչ նոր հզօրութիւն, այլ նաեւ սահմանային «փաստահաւաք» նոր կարողութիւն, երբ բազմաթիւ հատակ կարող է ներկայացվել, թէ ինչպէս է տեղի ունեցել հրադադարի խախտումը եւ ով է այն նախաձեռնել:

Չաքիր Հասանովը, իր հարցազրոյցում գրեթէ ամէն նախադասութիւնից յետոյ մինչեւ գետին խոնարհուելով Գերագոյն գլխաւոր հրամանատարի առաջ: Ալիեւի անկումը լինելու է անկում Հասանովի համար: Աւելին, պէտք է բացառել, որ Ալիեւը կարող է հեռանալ կնոջ երաշխիքներով, իսկ ահա Հասանովին կարող են անգամ դատել՝ ինչ որ մէկի վրայ վերագրելով ադրբեջանական բանակում կոռուպցիան եւ բացատրելով, թէ իրականում ինչու մինչեւ հիմա «չեն ազատագրել իրենց հողերը»:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՍԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Սարգսեանի Սիրտն Արկածախնդրութիւն Է Պահանջում

Հայաստանի Հանրապետական կուսակցութեան Գործադիր մարմինը յայտարարութիւն է տարածել, որը աւարտուած է հետեւեալ տողերով. «պետականութեան քայքայման գործընթացն անխուսափելիօրէն բերելու է անդառնալի կորուստների, որոնցից խուսափելու միակ ճանապարհը Նիկոլ Փաշինեանի հեռացումն է իշխանութիւնից»:

ուի՝ փողոցային առեւտրի անթոյլատրելիութեան մասին հնչեցրած գնահատականներին: Սերժ Սարգսեանը դասեր չի քաղել 2018 թուականի Ապրիլ-Մայիս ամիսներից: Իրեն թուած է, թէ Նիկոլ Փաշինեանը իրեն մերժեց, լաւ կազմակերպեց եւ օգտուեց առիթից: Իրականում իրեն մերժեց մի ամբողջ ազգ, Երեւանից մինչեւ Լոս-անջելես, Փարիզից մինչեւ Մեդրի, Գիւմրիից մինչեւ Աթէնք: Իսկ դա հնարաւոր չէր կազմակերպել, եթէ ժողովուրդը համոզուած չլինէր՝ Սարգսեանը եւ ՀՀԿ-ն անդառնալի հարուածներ են հասցնում հայոց պետականութեանը: Եւ քանի որ մինչեւ հիմա չի ընկալել, թէ ինչպէս եւ ինչու

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԱԾ-ն Մանրամասնութիւններ Ներկայացուցած է Ծառուկեանի Գործով

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) առաջնորդ եւ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեանին մեղսագրուող յանցագործութեան հիմնաւոր կասկածը հաստատուած համարելու համար նախաքննական մարմինը, Ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ) հաղորդագրութիւն տարածած է Յունիս 22-ին, «կարեւորելով հասարակական մեծ հնչեղութիւն ունեցող քրէական գործերով հանրութեանը թոյլատրելի չափով տեղեկատուութիւն տրամադրելու գործելաձևը եւ նպատակ ունենալով հանրութեան շրջանում սոյն քրէական գործի ելքով շահագրգիռ կամ ինքնուրոյն շահ հետապնդող շրջանակների կողմից ապատեղեկատուութեան տարածումը կանխարգելել»:

«Մասնաւորապէս, որպէս այդպիսի փաստական տուեալներ, դատարանը վկայակոչել է ղիտարկել է գործով ներգրաւուած 5 կասկածեալների ցուցմունքները, ինչպէս նաեւ «Երեւանի» ՍՊ ընկերութիւնում կատարուած խուզարկութեամբ յայտնաբերուած եւ առգրաւուած «ՀՀ Ազգային ժողովի ԲՀԿ պատգամաւորների ընտրութիւնների 2017 թուականին ներկայացուած ընտրողների թիւ եւ վճարուած գումարները» վերտառութեամբ հաշուետուութիւնները, որոնցում առկայ են եղել յստակ նշումներ մէկ ձայնի համար վճարուած գումարների, ընդհանուր քուէների դիմաց ընտրողներին տուած կաշառքի չափի, աքթիւիսթների միջոցով վճարուած գումարների, Գագիկ Ծառուկեանի յանձնարարութեամբ այլ անձանց գումարներ փոխանցելու վերաբերեալ նշումներ, որոնք անկողմնակալ ղիտորդի մօտ չեն կարող տարատեսակ մեկնաբանութիւնների տեղիք տալ, ինչը հաստատուել է նաեւ դատարանի կողմից:

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը ուշադրաւ կը համարէ «յատկապէս այն, որ սոյն քրէական գործի յարուցման

սկզբնական փուլում կատարուել են շուրջ 80-ից աւելի խուզարկութիւններ, որոնց ընթացքում «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան անդամների կամ աքթիւիսթների բնակարաններում յայտնաբերուել եւ առգրաւուել են նաեւ 2017 թուականի Ապրիլ 2-ին ՀՀ Ազգային ժողովի ընտրութիւնների ընթացքում «Ծառուկեան» կուսակցութիւնների դաշինքի եւ դրա կողմից առաջադրուած թեկնածուի օգտին քուէարկելու համար ընտրողներին կաշառքի առարկայ գումարները հասցեական կարգով տալու հանգամանքն ուղղակիօրէն հաստատող այլ փաստեր, որոնցում արդէն առկայ են եղել ընտրողների անհատական տուեալներ, ընտանիքի անդամների թիւը, իւրաքանչիւր անձին տրուած համապատասխան 10.000 ՀՀ դրամ գումարի վերաբերեալ նշումներ եւ կաշառք ստանալու հանգամանքը հաւաստող ստորագրութիւններ»:

Նախաքննական մարմնի տրամադրութեան տակ ներկայումս առկայ են նաեւ այնպիսի նիւթեր ՀՀ-ում գործող առեւտրային դրամատներից ընտրութիւնների նախորդող ժամանակահատուածում ստացել են 10.000 ՀՀ դրամներից բաղկացած հարիւրաւոր միլիոն դրամներ եւ նոյնաբնոյթ բազմաթիւ այլ փաստական տուեալներ, որոնց կապակցութեամբ նոյնպէս իրականացուած են աշխույժ քննչական գործողութիւններ», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Յունիս 16-ին, Ազգային ժողովի համաձայնութիւնը ստանալէ յետոյ, Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը միջնորդութիւն ներկայացուցած էր Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարան, Ծառուկեանի նկատմամբ կալանաւորումը որպէս խափանման միջոց կիրառելու վերաբերեալ, ինչ որ դատարանի կողմէն մերժուած է:

Դատախազութիւնը ընդհանուր իրաւասութեան դատարանի որոշումը պիտի բողոքարկէ վերաքննիչ քրէական դատարան:

Ապրիլին Փակուած 71,4 Հազար Աշխատատեղեր 50 Հազարը Մայիսին Վերականգնուած Է Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Facebook-ի ուղիղ եթերի ընթացքին

Մենք լաւատեսական ցուցանիշ ունինք. Ապրիլին փակուած 71,4 հազար աշխատատեղերէն 50 հազարը Մայիսին վերականգնուած են: Այս մասին Facebook-ի ուղիղ եթերով յայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Այս եւ մի քանի այլ տուեալներ վերլուծելով վերջնականապէս համոզուեցինք, որ պէտք է որդեգրենք «Քորոնա» ժահրին գուգահեռ ապրելու ռազմավարութիւն, որովհետեւ եթէ կեղրոնանանք միայն առողջապահական տեսակետին վրայ, մենք ոչ թէ տնտեսական անկում կ'ունենանք, այլ տնտեսական փլուզում: Մենք որոշեցինք գնալ այս ճանապարհով, որ թոյլ չտանք տնտեսութեան փլուզում, շեշտեց վարչապետը:

«Հիմա եթեր եմ մտել, որ ասեմ, որ մեր այս մօտեցումն արդէն հիմնաւորում է իր ճշմարտութիւնը: Դուք գիտէք, որ ամէն ամսուայ 20-ին ներկայացուում են նախորդ ամսուայ եկամտային հարկի հաշուարկները ՊԵԿ (Պետական եկամուտներու կոմիտէ): Այսօր առաւօտից մենք աշխատում ենք Մայիսի տուեալների վրայ եւ մեծ ուրախութեամբ պէտք է արձանագրեմ, որ Մայիսին, երբ որոշեցինք քաղաքի փակման քաղաքականութիւնը չշարունակել, 50094 աշխատատեղ վերականգնուել է:

«Ընդ որում, ես խօսում եմ միայն վճարուող աշխատատեղերի մասին, որովհետեւ մեր վիճակագրութեան մէջ կան աշխատատեղեր, երբ մարդը տէ ժուրէ աշխատում է, բայց աշխատավարձ չի ստանում, այսինքն գրոյական հաշուետուութիւն է ներկայացուում:

«Այսօր ՊԵԿ նախագահի հետ քննարկում էինք եւ արձանագրուեց, որ աշխատատեղերի վերականգնման գործընթացը շարունակուում է: Ի հարկէ, սա չի նշանակում, որ տնտեսական բարդութիւնը յաղթահարել ենք, սա նշանակում է, որ վերականգնման գործընթացը սկսել ենք: Դա պէտք է շարունակենք, որ կարողանանք նոր տնտեսական ցուցանիշների հասնել:

«Այսօրուայ տնտեսական ցուցանիշներն իրենց լաւատեսութեամբ ինձ համար շատ անսպասելի էին: Այս վիճակագրութիւնը չի կարող կասկածելի համարուել, որովհետեւ այն ձեւաւորուում է գործատուների ներկայացրած հաշուետուութիւնների հիման վրայ: Այսինքն իրենք ինչքան շատ գրեն, այնքան շատ հարկ պէտք է վճարեն, հետեւաբար շահ չունեն շատ գրելու: Սա ինձ եւս մէկ անգամ համոզում է, որ մենք պէտք է առաւելագոյնը անենք քաղաքի փակումին վերադառնալուց խուսափելու համար», ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Ռորերտ Քոչարեանի Կալանքի Փոփոխութիւնը Իշխանութիւններուն Զանգանգատացներ. Ալեւ Սիմոնեան

Յունիս 20-ին, Քաղաքացիական Պայմանագիր կուսակցութեան վարչութեան նիստի աւարտէն յետոյ Աժ փոխխօսնակ Ալեւ Սիմոնեան անդրադարձաւ այն հարցին, թէ արդեօ՞ք իշխանութեան կ'անհանգստացնէ, որ Ռորերտ Քոչարեանի կալանքը փոխուած է, Ալեւ Սիմոնեան պատասխանեց. «Ոչ, չի անհանգստացնում: Ինչո՞ւ պէտք է անհանգստացնի: Անհանգստացնում է մարդկանց գայլոյթը, այն ընկալումը, որ ինչ-որ մէկին բռնել էք, միւսին բաց էք թողում: Մենք դատարանի վճռի մասին իմանում ենք բոլորի հետ միասին: Որեւէ մէկին չենք բռնում ու բաց չենք թողնում: Դա քաղաքական որոշում չի եղել ու չի էլ կարող լինել: Իրաւական գործընթացը շարունակուում է: Էլ ինչ են եղել դէպքեր, երբ Ռորերտ Քոչարեանին ազատ են արձակել, յետոյ փոխուել է խափանման միջոցը»:

Այն հարցի մասին, թէ քաղաքական տարբեր ուժեր կը համախմբուին, Սիմոնեան ըսաւ, որ



Աժ փոխխօսնակ Ալեւ Սիմոնեան այդ ընդդիմադիր ճակատը կը ձեւաւորեն տարբեր երկիրներու ներկայացուցիչներ, իսկ մարդիկ ժամանակը կու գայ, իրենց խօսքը կ'ըսեն անոնց մասին:

Միւս կողմէ Ռորերտ Քոչարեանի Գրասենեակը Հաղորդագրութիւն տարածեց այն մասին, որ վերաքննիչ քրէական դատարանի որոշմամբ նախատեսուած գրաւի

Ռոպերթ Քոչարեանը 4.2 Միլիոն Տոլարի Գրաւի Դիմաց Ազատ Արձակուեցաւ

Վերաքննիչ քրէական դատարանը որոշեց կալանքէն ազատել Ռոպերթ Քոչարեանը: Դատաւոր Արսէն Նիկողոսեան ընթերցեց դատարանի որոշումը, ըստ որում՝ բաւարարութիւն տրուեցաւ Քոչարեանի պաշտպաններու միջնորդութեան եւ որոշուեցաւ կալանաւորումը վերցնել եւ կիրառել գրաւը, 2 միլիոն դրամի՝ 4,2 միլիոն տոլարի համարժէք չափով:

Ռոպերթ Քոչարեանին ազատ արձակելու համար սահմանուած գրաւի չափը Հայաստանի պատմութեան մէջ աննախադէպ է: Այս մասին լրագրողներուն ըսաւ Քոչարեանի փաստաբան Արամ Վարդեանեան:

Քոչարեանի որդին՝ Սեդրակ Քոչարեան իր կարգին յայտարարեց որ, իրենք այդքան գումար չունին: Սակայն, յաջորդ օրը, Քոչարեանի գրասենեակը յայտարարեց, որ շնորհիւ կարգ մը բարերարներու եւ համակիրներու կա-

տարած նուիրատուութեան, պահանջուած գումարը ապահովուած է եւ գրաւը վճարելէ ետք Քոչարեան ազատ արձակուած է ու վերադարձած իր բնակարանը:

Քոչարեանի պաշտպանները Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանին, Քոչարեանի կալանքը փոխելու միջնորդութիւնները մերժելու մասին որոշման դէմ բողոք ներկայացուցած էին վերաքննիչ քրէական դատարանին:

Միջնորդութեան քննութեան ժամանակ դատաւոր Արսէն Նիկողոսեան երկար հարց ու պատասխան ունեցած էր Քոչարեանին հետ:

Ռոպերթ Քոչարեանին, Մարտ 1-ի գործով, մեղադրանք առաջադրուած է ՀՀ քրէական օրէնսգրքի 300.1-ին յօդուածի 1-ին մասով այն բանի համար, որ ան ուրիշ անձերու հետ նախնական համաձայնութեամբ տապալած է ՀՀ սահմանադրական կարգը:

վճարուած են ետք, Յունիսի 19-ի երեկոյեան Քոչարեանի կալանաւոր-

ումը վերացուած է եւ ան վերադարձած է իր բնակարանը:

ԼՈՒՐԵՐ

Արցախի Նախագահ. 2016 Թուականին Ստեփանակերտի Օդը Անպաշտպան Էր

2016 թուականի Ապրիլի 16-ին պատերազմի ժամանակ Ստեփանակերտի օդը անպաշտպան էր՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության տրուած հարցազրույցի մը ընթացքին նման արձկալարոյց յայտարարութիւն կատարեց Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան՝ աւելցնելով, որ չուզեր մանրամասնութիւններու մէջ մտնել:

Յարութիւնեան, որ 2016-ին Լեռնային Ղարաբաղի վարչապետն էր, շեշտեց որ, այսօր օդը շատ աւելի ապահով է:

Չորս տարի առաջ՝ Ապրիլին տեղի ունեցած քառօրեայ պատերազմի հետեւանքով հայկական կողմը տուաւ աւելի քան հարիւր զոհ: Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեան խոստովանեցաւ որ, 800 հեկտար տարածքային կորստի ունեցած ենք, թէեւ վերջերս ան այդ կորուստը գնահատեց 400 հեկտար:


«Շատ աւելի անպաշտպան էինք, չեմ ուզում փակագծեր բացել, Ստեփանակերտն անպաշտպան էր, Ստեփանակերտի օդն անպաշտպան էր 16 թուականին: Չեմ ուզում ամբողջը մանրամասնել, այսօր ուզում եմ վստահ յայտարարել՝ ոչ միայն Ստեփանակերտի օդն է պաշտպանուած, այլ Արցախի օդն է պաշտպանուած ամբողջութեամբ: Այդ նոյն հակաօդային պաշտպանութեան բնագաւառում բաւական մեծ տեղ է յատկացուել հենց այդ նոյն իրենց նշած հին կամ անպիտան, չաշխատող սարքաւորումներին, որոնք արդէն իսկ իրենց դերը խաղացել են՝ նոյն անօդաչու սարքերի, բացի դրանից նոր, նորագոյն հակաօդային միջոցներ են



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան

ձեռք բերուել ու այսօր օգտագործում ենք Արցախի օդը պաշտպանելու առումով: Գիտէք՝ ամենախոցելին մեզ համար օդն էր, եւ այդ վտանգը կար 92-94 թուականներին, հազիւ էինք պաշտպանում, չնայած Ստեփանակերտը միշտ բաց էր, եւ հակառակորդն օգտուած էր այդ հնարաւորութիւնից եւ յաճախակի էր հարուածում Ստեփանակերտին, ոչ միայն Ստեփանակերտին, Ղափանին, Գորիսին եւ այլն: Այսօր մենք ունեն շատ աւելի անվտանգ, աւելի ճիշդ ապահով օդ, այսինքն հակաօդային հնարաւորութիւններն այնպիսին են, որ համոզուած կարող եմ յայտարարել, որ այդ խնդիրը չի լինի: Նոյն ժամանակակից ձեռք բերուած հակաօդային եւ ինչու չէ, նաեւ այն աւիացիան, որն ունի այսօր Հայաստանի Հանրապետութիւնը», - ըսաւ Արայիկ Յարութիւնեան:

Նախագահ Սարգսեան. «Մենք Պէտք է Ընենք Ամէն Ինչ, Որ Արցախը Կայանայ Իբրեւ Ռզօր Պետութիւն»



Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան գրուեցած է Ազգային ժողովի «Իմ Քայլը» խմբակցութեան պատգամաւոր Տաթևեհի Հայրապետեանի եւ քաղաքագէտ Էտկար Էլբակեանի հետ:

«Մենք պէտք է ընէինք եւ ընենք ամէն ինչ, աշխատինք օր ու գիշեր, որ Արցախի Հանրապետութիւնը՝ իբրեւ քաղաքական եւ պետական միակոր, կայանայ իբրեւ հզօր պետութիւն, հզօր՝ տնտեսապէս, ռազմական ու նաեւ՝ ժողովրդագրութեան իմաստով», ըսած է նախագահ Արմէն Սարգսեան:

Ան նշած է, որ ժողովրդագրութիւնը այսօր կարեւոր գործօն է ամբողջ աշխարհին մէջ, հիմք հանդիսանալով անվտանգութեան,

քաղաքական, տնտեսական եւ բազմաթիւ այլ խնդիրներու լուծման համար:

Հանրապետութեան նախագահին համաձայն, Արցախը ունի աւելի քան բաւարար միջոցներ՝ զգալիօրէն մեծցնելու իր մարդկային զբաղմունքը եւ աւելի զարգանալու:

Այդ ուղղութեամբ պէտք է կատարուին գործնական քայլեր:

Միւս կարեւոր խնդիրը նախագահ Սարգսեանը նկատած է պարէնի անվտանգութեան հարցը: Անոր համաձայն, Արցախը ունի բոլոր կարելիութիւնները՝ աշխուժօրէն զբաղելու պարէնի արտադրութեամբ: «Եթէ այսօր ունինք Գորոնա ժահրին հետ կապուած խնդիրներ, որոնք ցաւազին են,

Եթէ Ոմանց Յոյսը 10 Հազար Դրամով Հրապարակ Մարդ Բերելն Է, Ապա Անոնք Արագ Փուլ Կու Գան.Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան պարտատան Գիտնոյ յետոյ կայացած ճեպագրոյցի ժամանակ

Այդ հաւաքները հիմա սահմանափակուած են, բայց ո՞վ ըսած է, որ հնարաւոր հաւաքի մասնակիցները պէտք է պարտադիր դժգոհութիւն արտայայտէին գործող կառավարութեան: Այս մասին, Յունիս 22-ին, պարէտատան նիստին յետոյ կայացած ճեպագրոյցի ժամանակ նշեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Իսկ ո՞վ է ասել, որ այդ հնարաւոր հանրահաւաքի 10-20 կամ նոյնիսկ 100 անգամ աւելի մեծ թուով մասնակիցներ դժգոհութիւն չպէտք է արտայայտէին որոշ քրոնփոխներէն գործունէութեան հետ կապուած: Ընդհանուր առմամբ սա պէտք է հաշուի առնել: Պէտք է ոմանք շնորհակալ լինեն, որ Հայաստանում արտակարգ դրութիւն է եւ հաւաքներ անելու հնարաւորութիւն չկայ, որովհետեւ կարծում եմ՝ յեղափոխութեան կողմնակիցները առնուազն մի քանի դէպքերում զանգուածային հաւաքներ կ'անցկացնէին եւ իրենց խօսքը կ'ասէին առնուազն մի շարք յստակ դէպքերի, անձանց գործունէութեան հետ կապուած:

Թոյլ տուէք նաեւ արձանագրել, որ որոշ այսպէս ասած, այդ

կարգի մեկնաբանութիւններ տուող շրջանակներ գերազանհատում են Հայաստանում հանրահաւաքներ իրականացնելու իրենց ուժը: Որովհետեւ եթէ հանրահաւաք ասելով նկատի ունեն սահմանափակ թուով մարդկանց 10 հազար դրամով հրապարակ բերելը եւ նրանց յոյսը դրանց վրայ է, ապա իրենց յոյսերը շատ արագ կը փլուզուեն արտակարգ դրութեան աւարտից յետոյ», - յայտարարեց Փաշինեան:

Ան աւելցուց, որ այսօր կառավարութիւնը խնդիր դրած է, որ մարդիկ քիչ վարակուին. «Եւ եթէ մենք այսօր դպրոցները, մանկապարտէզները, դիտական կենտրոնների գործունէութիւնն ենք անգամ սահմանափակել, կարծում եմ՝ այդ մեկնաբանութիւնը տեղին չէ:

Դեռ հարց է, թէ հնարաւորութեան դէպքում յեղափոխութեան կողմնակիցները, թէ կառավարութեան հակառակորդները աւելի շուտ եւ աւելի շատ, մեծաքանակ հանրահաւաքներ կ'անեն: Դեռ հարց է, թէ ովքեր այդ հանրահաւաքով շատ աւելի արագ հարցեր կը լուծէին այդ հանրաւարակների միջոցով», - ըսաւ վարչապետը:

մարդկային կեանքեր կը խլեն, վաղը պիտի ունենանք տնտեսական խնդիրներ: Տնտեսական խնդիրներէն գատ՝ պիտի ունենանք նաեւ պարէնի անվտանգութեան խնդիր: Աշխարհի մէջ պարէնի անվտանգութեան իմաստով ինքնաբաւ պետութիւններ գրեթէ չկան», ըսած է

ՀՀ նախագահը: Ընդգծելով տնտեսութեան, ժողովրդագրութեան եւ պարէնի անվտանգութեան ոլորտներուն կարեւորութիւնը, նախագահ Սարգսեան խօսած է այդ ուղղութիւններով ազգային, պետական ծրագիր ունենալու մասին:

Ճշմարտութիւնը Հարթելու Է Իր Ճանապարհը

Շարունակուած էջ 1-էն

ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման հարցը հայ-թրքական խնդիր չէ, ան թուրքիոյ եւ միջազգային հանրութեան խնդիր է: Այդ կը վկայէ թուրքիոյ բազմաթիւ յայտարարութիւնները եւ գործողութիւնները, այս կամ այն երկրի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերելով:

Աննա Նաղտայեան աւելցուց որ, թէ մեզի եւ միջազգային հանրութեան համար Հայոց ցեղասպանութիւնը իրողութիւն է, որ նաեւ որպէս հիմք ծառայած է Յեղասպանութեան դատապարտման եւ կանխարգիլման 1948 թուականի համաձայնագրութեան մշակման եւ անոր հիման վրայ ներկայիս ցեղասպանութիւններու եւ

մարդկութեան դէմ յանցագործութիւններու կանխարգիլման գործելակերպերու ներդրման համար:

«Ժխտողականութիւնը ապագայ չունի, անկախ՝ ով եւ ինչպէս կը փաթեթաւորի այն: Որքան էլ թուրքիայի իշխանութիւնները ջանքեր գործադրի ճշելու ճշմարտութիւնը, ամէն դէպքում ճշմարտութիւնը հարթել եւ հարթելու է իր ճանապարհը», - ըսաւ Նաղտայեան:

Անցեալ շաբաթ պաշտօնական հաղորդագրութիւն տարածուեցաւ այն մասին, որ թուրքիոյ նախագահի գլխաւորութեամբ տեղի ունեցած է 5 ժամ տեւողութեամբ խորհրդակցութիւն՝ քննարկելու համար Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ Հայկական լուսաւորի դէմ պայքարելու ծրագիրներ մշակելու նպատակով:

ԱՄՆ-ը Ատրպեյճանին Կոչ Ուղղած Ե Առաել Թափանցիկ Ըլլալու Զօրավարժութիւններ Կատարելու Շարքով



Տեսարան՝ վերջերս տեղի ունեցած Ատրպեյճանի բանակի զօրավարժութիւններին

Միացեալ Նահանգները անցեալ տարուայ Օգոստոսին ի վեր կոչ կ'ուղղէ Ատրպեյճանին առաել թափանցիկ ըլլալու զօրավարժութիւնները կատարելու շարքով, յաւելեալ տեղեկութիւններ ներկայացնելով անոնց չափի եւ նշանակութեան մասին:

«Ըստ Վիեննայի համաձայնագիրին, Ատրպեյճանը պարտաւոր էր տեղեկ պահել առնուազն մէկ լայնածաւալ զօրավարժութեան մասին, ինչ որ չէ ըրած», - փաստած է ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը «Սպառազինութիւններու վերահսկողութեան մասին» ամէնամեայ զեկոյցին մէջ:

Պետական Քարտուղարութիւնը չի շեղուցած է, որ անցեալ տարի Պաքոն, ըստ իր իսկ Պաշտպանութեան նախարարութեան, առնուազն երեք լայնածաւալ զօրավարժութիւններ կատարած է 10 հազար զինուորականներու, հարիւրաւոր հրասայլերու, խոշոր զրահամեքենաներու ու օդուծի ներգրաւումով, սակայն որեւէ մէկ պարագային անոնց վերաբերեալ տեղեկութիւն չէ տրամադրած Ուաշինգթոնին:

Ատրպեյճանը կը շարունակէ խախտել իր պարտաւորութիւնը, ամրագրած է զեկոյցը, մանրամաս-

նելով, որ «2019-ի օգոստոսին Միացեալ Նահանգները Ատրպեյճանին փոխանցած է թափանցիկութեան պակասի վերաբերեալ իր մտահոգութիւնները»:

Գոնկրէսին ներկայացուած հաշուետուութեան մէջ ընդգծուած է, որ պիտի շարունակէ հետամուտ ըլլալ այս հարցին եւ յառաջիկային եւս Ատրպեյճանի հետ երկկողմանի ու բազմակողմանի հանդիպումներուն, կարեւորութիւն պիտի տայ ռազմական գործողութիւններու մասին համապարփակ եւ ճիշդ ժամանակին տեղեկութիւններ կայացնելու անհրաժեշտութեան:

«Զօրավարժութիւնները, որոնց մասին չի հաղորդուիր կամ ամբողջ տեղեկատուութիւնը չի տրամադրուիր, հարուածի տակ կը դնեն Վիեննայի համաձայնագիրը», - արձանագրած է Պետական Քարտուղարութիւնը:

Համաձայնագիրը ընդունուած է Եւրոպայի մէջ Անվտանգութեան եւ Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) Տովանիի ներքոյ 2011 թուականին, անվտանգութեան ոլորտին մէջ անդամ երկիրներու միջեւ վստահութիւնը ամրապնդելու, սպառազինութիւններու նկատմամբ վերահսկողութիւն սահմանելու նպատակով:

Սահմանադրական Փոփոխութիւններ

Շարունակուած էջ 1-էն

արտահերթ նիստին ներկայացուց պատգամաւոր՝ Վահագն Յովակիմեան: Ան, մասնաւորապէս, ըսաւ. «Ճգնաժամի պատճառը այն գործունէութիւնն է, որը այդ մարմինը ծաւալել է իր հիմնադրման պահից՝ 1996 փետրուար 6-ին յաջորդած 22 տարիներին»:

Սահմանադրութեան 213-րդ յօդուածի փոփոխութիւնները ուժի մէջ մտնելու պահէն Հրայր Թովմասեան կը շարունակէ պաշտօնավարել, որպէս Սահմանադրական դատարանի անդամ: Կը դադարեցուին նաեւ ՄԴ-ի 9 անդամներէն 3-ի լիազօրութիւնները՝ Հրանդ Նազարեանի, Ֆելիքս Թոխեանի եւ Ալվինա Կիւլումեանի:

Հրանդ Նազարեան ՄԴ-ի դատաւոր նշանակուած է 1997 թուականին, իսկ Ֆելիքս Թոխեանը՝ 1997 թուականին, եւ կը պաշտօնավարեն համապատասխանաբար 25 եւ 24 տարի:

Ալվինա Կիւլումեանը նախ պաշտօնավարած է 1996-2003 թուա-

կաններուն, ապա կրկին նշանակուած է 2014-ին ու կը պաշտօնավարէ մինչեւ օրս, աւելի քան 12 տարի:

Յարակից զեկուցող, Արդարադատութեան նախարար՝ Ռուստամ Պատասեան անդրադարձաւ նախագիծի վերաբերեալ Վենետիկի յանձնաժողովէն ստացուած եզրակացութեան. «Մասնաւորապէս, Վենետիկի յանձնաժողովը նշել է, որ դատաւորների անփոփոխելիութեան սկզբունքը ԵՆ (Եւրոպայի Խորհուրդ) տարածքում չափազանց կարեւոր երաշխիք է: Եւ Վենետիկի յանձնաժողովը չափազանց զգուշաւորութեամբ է խորհուրդ տալիս վերաբերել ցանկացած փոփոխութեանը, որը այս սկզբունքին որեւէ կերպ առնչուում է»:

Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասեան անդրադառնալով խորհրդարանի կողմէն ընդունուած սահմանադրական փոփոխութիւններու նախագիծին, ակնարկեց, որ անիկա պէտք է ուղարկուէր Սահմանադրական դատարան:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը Կը Շարունակէ Աջակցիլ Լիբանանի Հայկական Կրթական Հաստատութիւններուն Եւ Լրատուամիջոցներուն

«Հայաստան» համահայկական հիմնադրամը 55 հազար ԱՄՆ տոլար նուիրատուութիւն կատարած է ի աջակցութիւն Լիբանանի կրթական հաստատութիւններուն, որոնք երկրին մէջ տիրող ընկերա-տնտեսական ճգնաժամային պայմաններու պատճառով յայտնուած են դժուար կացութեան մէջ: Միջոցները հաւաքագրուած են Ֆրանսայի եւ Գերմանիոյ հիմնադրամի տեղական կառույցներու կողմէն:

«Այժմ, երբ մեր բոլոր ճիւղերն ուղղուած են սատարելու Հայաստանի եւ Արցախի առողջապահական ոլորտին, կարեւոր է նաեւ ձեռք մեկնել Լիբանանում անելանելի դրութեան մէջ գտնուող մեր կրթամշակութային օջախներին, ինչպէս նաեւ տասնեակ տարիներ գործող հայալեզու լրատուամիջոցներին: Լիբանանում ընկերա-տնտեսական ծանր ճգնաժամն էլ աւելի հասցնացաւ համավարակի տարածմամբ: Աշխարհասփիւռ հայկական համայնքները համահայկական հիմնադրամի մշտական ուշադրութեան կեդրոնում են», - նշած է Հիմնադրամի գործադիր տնօրէն Հայկակ Արշամեան:



թեան, ընհանուր առմամբ 10 հազար ԱՄՆ տոլար համամասնաբար կը տրամադրուի Լիբանանի հայկական լրատուամիջոցներուն՝ «Ազդակ», «Զարթօնք» եւ «Արարատ» օրաթերթերուն, ինչպէս նաեւ «Վանայ Զայն» ռատիոկայանին:

Յիշեցնենք նաեւ, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը դեկտեմբեր 2019 թուականին, Լիբանանի Ազգային առաջնորդարանի միջոցով հայկական 18 կրթական հաստատութիւններու փոխանցած էր 150 հազար տոլար, որու 50 հազարը Արցախի կառավարութեան էր:

Ուրուկուէյահայերը Մտահոգուած Են Թուրքիոյ Վերջին Հակահայ Գործողութիւններով

Ուրուկուէյի հայ համայնքի կազմակերպութիւնները յայտարարութիւն հրատարակած են խոր մտահոգութիւն յայտնելով թրքական վերջին հակահայ գործողութիւններուն կապակցութեամբ:

Յայտարարութեան մէջ նշուած են Թուրքիոյ մէջ հայկական եկեղեցիներու դէմ յարձակումները, Հրանդ Տինքի ալքիի՝ Ռաքել Տինքի դէմ մահուան սպառնալիքները, Լիբանանի հայութեան դէմ արձա-

նագրուած միջադէպերն ու նաեւ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Էրտողանի յայտարարութիւններն ու որոշումները Հայոց ցեղասպանութեան ժխտման քաղաքականութիւնը խորացնելու նպատակով:

Ուրուկուէյահայ համայնքի կազմակերպութիւնները կը խնդրեն երկրի իշխանութիւններէն ու հասարակութենէն ուշադիր հետեւիլ այս իրադարձութիւններու զարգացման:

Հակասահմանադրակա՞ն է արդեօք նախագիծը Բարձր դատարանի չուղարկելու իշխանական խմբակցութեան որոշումը, այս հարցով Թովմասեան զերծ մնաց զնահատականներէն:

«Այն սահմանադրութիւնը, որը գործում է, որին ես մասնակցել

եմ, այնտեղ չի գրուած, որ եթէ սահմանադրական փոփոխութիւնները վերաբերուելու են Սահմանադրական դատարանին, դա ենթակա չէ նախնական սահմանադրական վերահսկողութեան», - լրագրողներու հետ ճեպագրոյցին ըսաւ Թովմասեան:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

Սիտնիի Սեջ Յնչակեան Քսան Կախադաններու 105-Ամեակի Ոգեկոչում



Կիրակի, 21 Յունիս 2020-ին, Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ նշուեցաւ Հնչակեան Քսան անմահներու 105-ամեակի յիշատակը, կազմակերպութեամբ ՄԴՀԿ Աւստրալիոյ Շրջանի վարիչ Մարմնոյ:

Մասնակիցները նախ ներկայ գտնուեցան Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին, որու աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն ի յիշատակ Քսան անմահներուն: Հոգեհանգստեան արարողութեան ընթացքին Տէր Աւետիս քահանայ Համբարձումեան ընթերցեց կախադան բարձրացած Քսան հերոսներուն անունները մէկ առ մէկ:


Պատարագին կը նախագահէր Աւստրալիոյ եւ Նիւ Ջելանտայի առաջնորդ Գերշ. Տ. Հայկազուն Արք. Նաճարեան:

Հոգեհանգստէն ետք ներկայները ուղղուեցան եկեղեցւոյ մօտակայ աչքին, ուր գետեղուած է Հայոց Յեղասպանութեան նուիրուած խաչքար մը, շարունակելու համար ոգեկոչումը: Նկատի առնելով Գորոնա ժահրի համաճարակը, սահմանափակ թիւով հրաւիրեալներ ներկայ էին:

Խաչքարին ծաղկեպսակ գետեղեցին վեթերան ընկերներ ձօն Տէմիրճեան եւ Վրէժ Մանուկեան:

Խաչքարին շուրջ համախմբուած, յանուն ՄԴՀԿ Աւստրալիոյ շրջանի վարիչ Մարմնին, խօսք առաւ Շրջանի ատենապետ ընկեր Աւօ Թովուզեան:

Ապա սրտի խօսքով ելոյթ ունեցաւ Հայկազուն արքեպիսկո-



մահով չաւարտեցաւ, անոնք ճշմարիտ մարգարէներու պէս գուշակեցին, որ քսաններուն տեղ ուրիշ քսաններ, քսան հազարներ պիտի գան եւ պիտի իրականացնեն իրենց



պոս Նաճարեան, որ վեր առաւ Քսաններու սիրագործութիւնը: Ան ըսաւ, որ այն օրու ընէ երբ Խրիմեան Հայրիկ վերադարձաւ եւ գիտցաւ, որ առանց երկաթէ շերեփի հնարաւորութիւն չկար այլեւս հայկական իրաւունքները պաշտպանելու, Հնչակեան կուսակցութիւնը որպէս Մայր կուսակցութիւն առաջինը եղաւ մտածելու, թէ ինչ ձեւով հայ ժողովուրդը կրնար իր արդար իրաւունքներուն տէր կանգնիլ: Ան շեշտեց, որ Քսանները ինկան, սակայն անոնց երազը իրենց

երազը: Այսօր մենք այդ Քսաններէն դասեր պէտք է քաղենք, որպէսզի գոհ չերթանք նոր խարդաւանքներու եւ մեր այս ունեցած հայրենիքն ալ չկորսնցնենք: Սրբազանը նշեց, որ Քսանները իրենց կախադաններէն մեզի դասեր կու տան, որ պէտք է միացեալ ու միախորհուրդ ըլլանք, քանի որ մեր գորութիւնը մեր հաւաքականութեան մէջ է: Սրբազանը ապա «Պահպանիչ»-ով փակեց հաւաքը: Աւարտին երգուեցաւ «Ուխտի Երգ»ը:

Ամերիկայի Թեքեան Մշակութային Սիւնիւնը 60,000 Տոլար Կը Յատկացնէ Պէյրուֆի Վ. Թեքեան Վարժարանին

Լիբանանի երբեմնի բարգաւաճ համայնքը այս օրերուն կը դիմագրաւէ գոյութեան լուրջ տագնապ:

Սփիւռքի համայնքներու փոխօգնութեան սկզբունքով՝ մեր համայնքները պարտին ձեռք մեկնել Լիբանանի հայ համայնքին, մասնաւորապէս որ այդ համայնքը տասնամեակներու ընթացքին մտաւորական, կրթական գաղափարական անունը մատուցած է Արեւմուտքի տկարացող գաղութներուն, կենսաւորելով անոնց վերապրումի պայքարը այլասերման դէմ:

Վերջին տասնամեակներուն զգայացուց տագնապներէ անցաւ լիբանանահայութիւնը, արագացնելով արտագաղթը եւ տկարացնելով համայնքը:

Իբրեւ հետեւանք այդ տագնապներուն ծանրօրէն տուժեց կրթական համակարգը: Փակուեցան կարգ մը վարժարաններ իսկ Հ.Բ.Լ.Միութիւնը իր հինգ վարժարանները համախմբեց մէկ վարժարանի յարկին տակ. նոյնը պատահեցաւ Ազգային իշխանութեան (եկեղեցւոյ) դպրոցներուն:

Պէյրութի Թէքեան վարժարանը որ 70 տարիներէ ի վեր կը գործէ Պուրճ Համուտի հայաշատ շրջանին մէջ, իր հերթին տուժեց ծանրօրէն՝ աշակերտութեան նօսրացման հետեւանքով: Սակայն, շնորհիւ ծնողներու եւ հոգաբարձութեան հերոսական ճիգերուն, ինչպէս նաեւ ԹՄՄ Հիմնադիրներու Մարմնի հովանաւորութեան վարժարանը պահպանեց իր գոյութիւնը: Ամերիկայի Թէքեանի շրջանակը եւս բերաւ իր լաջն աջակցութիւնը վարժարանին, որ բազմաթիւ ուսեալ սերունդներ պատրաստեց սփիւռքի հայութեան համար:

Այսօր, քորոնաժահրի համաճարակը, միացած Լիբանանի քա-



ղաքական ու տնտեսական տագնապին, ամբողջութեամբ անդամալուծած է հայ համայնքը:

Այս ծանր պայմաններուն ներքեւ ԹՄՄ Հիմնադիրներու Մարմինը, Պէյրութէն սիրալիր կողմը ուղղած է Ամերիկայի եւ Գանատայի ԹՄՄ Կեդրոնական վարչութեան, ինչպէս նաեւ համայն հայութեան փրկելու վարժարանը անխուսափելի վախճանէ մը:

ԹՄՄ Կեդրոնական վարչութիւնը արդէն փութաց փոխանցել 50,000 ամերիկեան տոլարի գումար մը: Արդէն նախապէս 10,000 տոլար փոխանցուած էր դպրոցին: Խոստանալով շարունակել իր օժանդակութիւնը՝ կենդանի պահելու համար այս կրթական փառաւոր հաստատութեան գոյատեւումը:

Այսօր պահ է նաեւ գորակոչի եմթարկելու Թէքեան վարժարանի նախկին սաներն ու շրջանաւարտները որ վերջի շնորհք երբեմնի կրթական մայր օճախը եւ փութան կարելի չափով երկարաձգել անոր գոյութիւնն ու առաքելութիւնը:

Այս կողմը հաւասարապէս ուղղուած պէտք է նկատել ըրոր կրթանուէր հաստատութեանց եւ բարերար անհատներու որ տէր կանգնին այս կրթական օճախին, որ գոյութեան կանգնեցնեն մէկը հանդիսացած է 70 տարիներէ ի վեր,

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the
2020 AEBU Scholarship Program
Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
Through June 30, 2020

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

Massis Weekly

Volume 40, No. 23

Saturday, JUNE 27, 2020

Armenian Servicemen March in Moscow Victory Day Parade



- Լսի՛ր, Գայլ եղբայր, դիմեց Աղուէսը իր մօտ խորհրդի եկած Գայլին, - ճիշդ է, որ դու ինձնից աւելի ուժեղ ես եւ զիշատիչ, բայց գիտես նաեւ, որ ես քեզնից աւելի խելացի եմ, եւ միշտ, իմ խորամանկութեամբ չաղթել եմ քեզ: Հիմա դու եկել ես այն երկիրը, ուր մենք պէտք է բարեկամներ լինենք, որպէսզի միացեալ ուժերով կարողանանք ոչխարների այս հսկայ բանակի հախից գալ՝ ոչ թէ նրանց ուսելով, այլ՝ աշխատեցնելով: Թող մեզ համար ձրիաբար աշխատեն, մի կտոր հաց է՝ կը տանք էլի: Որպէսզի կարողանանք մեր նպատակին հասնել, անհրաժեշտ է, որ երկուսս էլ ոչխարի մորթի հագնենք եւ, որպէս տեղացի ոչխարներ, իբր գործից-բանից հասկացողներ, նրանց պէտք մեր ճանկը:

- Իսկ նրանք չե՞ն հասկանայ, որ մենք ոչխարներ չենք:

- Ի՞նչ պիտի հասկանան..., ոչ բերան ունեն, ոչ էլ բերաններում խոտ կայ, արօտավայրի տեղին էլ ծանօթ չեն, չգիտեն թէ ինչ գազաններով են շրջապատուած: Մեր քաղցր լեզուից արբեցած, ուզե՛ն, չ'ուզե՛ն մեր ճանկը կ'ընկնեն:

- Հա՛, լաւ ես ասում Աղուէս եղբայր, դու ինձնից աւելի խելացի ես ու խորամանկ, - ասաց Գայլը, - աւելի լաւ է դրանց աշխատեցնել՝ քան թէ խժռել, թէ չէ ո՛ւր կը հասնի՝ կե՛ր, հա կե՛ր..., վերջում ոչինչ չի մնայ լուսելու: Այսպիսով գոնէ կ'իմանանք, որ յաւիտեանս ոչխարներ ունենք, որոնք մեզ կը կերակրեն:

* * *

... Եւ այսպէս, ոչխարների մորթի հագած Գայլն ու Աղուէսը թեւեւեւ քշտած գործի անցան: Գործարար ոչխարների տեսք առած,

մի քանի օր յետոյ, շքեղ ընդունաւորաններում, բազմօգններին թիկնած, գրաւիչ ու բարեհամբոյր ժպտներնրը դէմքերին, հազը--կապը--տեղին, սկսեցին յաճախողներ ընդունել: Իսկ ոչխարները գալի՜ս էին ու գալիս: Գալիս էին ու ընկնում Գայլի ու Աղուէսի սուր ճանկերի մէջ:

- Հա՛, լաւ ես արել, որ եկել ես մեր երկիրը, - ասաց Գայլ-Ոչխարը՝ աշխատանք գտնելու յոյսով իր մօտ եկած Մայր ոչխարին:

- Լաւը՛ լաւ, բայց դժուար է խոտի բանը, եղբայր հարազատ, եւ յետոյ, նախապէս եկած ոչխարներն էլ իրենց համար տարածութիւններ են առանձնացրել, ցանկապատել, ու չեն թողնում մեզ՝ իրենց ազգակիցներին արածել: Նոյնիսկ՝ տարիներ առաջ, միեւնոյն արօտավայրից օգտուած ազգակիցներն անգամ երես են թեքում մեզնից: Ես իմացայ, որ դուք լաւ արօտավայր ունէք, եւ աշխատանքի դիմաց թողնում էք, որ աշխատաւորները արածեն:

- Ճիշդ էս իմացել, - ասաց ծպտուած Գայլը՝ աւելի հաստատուն տեղաւորուելով բազկաթոռի մէջ, - պայմանը այսպիսին է, քոյր ոչխար, նախ՝ մի քանի ամիս պիտի ձրիաբար աշխատես, համոզես մեզ, որ դու կարող ես քեզ վստահուած գործը առաջ տանել:

- Ինչպէ՛ս թէ՛ ձրի, - յուսաւ հատ բացականչեց Մայր ոչխարը, հապաչ ո՞նց եմ կերակրելու գառնուկներս:

- Այո՛, այո՛ ձրի..., իսկ գառնուկներդ համար՝ մի անհանգստանալ, հստեղ, էս հսկայ տարածութիւնը տէրեր ունի, գիտես էլի՛ առիճները, վազրերը ու միւս կենդանիները: Նրանք յատուկ արօտավայրեր են առանձնացրել մեզ նմանների համար: Մինչեւ չ«ապացուցէք, որ էս երկրի հալալ-գուլալ, հարազատ բնակիչներն էք՝ ստիպուած էք օգտուել կառավարա-կան արօտավայրերից:

- Որ այդպէս է՝ կարելի է փորձել, - կմկմալով պատասխանեց մայր-ոչխարը, եւ յաջորդ օրն իսկ անցաւ աշխատանքի՝ հենց Գայլ-ոչխարի ընդունարանում:

* * *

... Գիշեր-ցերեկն իրար խառնած, աշխատում էր Մայր ոչխարը: Նուիրումը սահման չ'ունէր: Տէրը նայում էր, ծպտում, քաջալերում: Այսպէս անցաւ մի քանի ամիս: Մայր ոչխարը յոգնած, հագիւ իրեն գցում էր գոմը եւ խորժակ էլ չէր ունենում իր նմանների համար առանձնացուած խղճուկ արօտավայրից օգտուելու:

Տեսնելով, որ տէրը չի մտածում իրեն վարձատրելու մասին, մի օր, համբերութիւնից դուրս ելած դիմեց նրան.

- Տէր իմ, ժամանակը չէ՞ արդեօք ինձ վճարելու:

- Օհօ՛, շատ ես շտապում բարեկամ, շա՛տ..., հագիւ չորս ամիս եղաւ աշխատելը, համբերիր..., դու դեռ քեզ չես դրսեւորել ինչպէս որ պէտք է, երկու ամիս եւս՝ ես քեզ կը վճարեմ...

Անցաւ եւս երկու ամիս:

- Այսօր վեց ամիսը լրացաւ, յարգելի տէրս, - դիմեց մայր ոչխարը՝ իր նմանների քրտինքով ուռճացած տիրոջը, որն արդէն գիրութիւնից հագիւ էր տեղաւորում բազկաթոռի մէջ:

- Ճիշդ է, բարեկամս, լրա-

Պուրճ Դամուտա-Անգլոհայերէն (Anglo-Armenian)

ՄԻՆԱՍ ԳՈՏԱՅԵԱՆ

Ջարմանալի բարդ բառ մըն է չէ՞ մեր վերնագիրը, բայց ի՞նչ անուն տալի այն հաղորդման լեզուին, գոր վերջերս դիտեցի եւ լսեցի դարուս (21-րդ) հայ մեծագոյն եւ անկրկնելի կատակաբաններէն երկարամազ մեր Վահէին գրոյցը Պրն. Գանտահարեանի հետ:

Նիւթը Լիբանանի մէջ վերջերս ծագումով օսմանցի թուրք լիբանանցիներու շտեմուած հակահայ ցոյցերն ու հայտեաց ելոյթներն էին - յար եւնման «Գորչ գայլե» ըրուելոյթներուն: Լիբանանահայ գեկուցաբերը յայտնի անձնաւորութիւն մըն է եւ յայտնի անձնաւորութեան մը որդին, որուն յանձնուած է կարեւոր տարողութեամբ օրաթերթ մը:

Մտահոգուած ըլլալով ծննդավայրիս, մանկութեանս, պատանեկութեանս եւ վաղ երիտասարդութեանս շրջանի Լիբանանեան հայրենիքով եւ հոն իր գոյութիւնը տակաւին շարունակող հայութեամբ, ուշադրութեամբ հետեւեցայ գրոյցին եւ նոյնքան եւ աւելի մտահոգեցայ սփիւռքի մէջ տակաւին իր գոյութիւնը քաջքոյ արեւմտահայերէնի ներկայով ու ապագայով:

Եթէ Լիբանանի՛ մէջ այսպիսի «հայերէն» մը կը խօսին (բարեբախտաբար տակաւին չեն գրեր այս հայերէնով), կրնա՞ք պատկերացնել առհասարակ սփիւռքի տարածքին խօսուող հայերէնին (արեւմտահայերէնին) ներկայ աննախանձելի եւ անփառունակ վիճակը:

Ինչպէ՞ս կարելի է արդարացնել գրուցավարին եւ մեկնաբանին հետեւեալ բառերն ու արտայայտութիւնները, մանաւանդ երբ երբեմն հայերէնն ալ կը տրուի այդ բառերուն գուգահեռ:

Խնդրեմ՝

From the horse's mouth, I know, I know, anyway, so, provocative, classic, citizenship, target, passport, statistics, reaction... եւ այլն:

Այս տխուր եւ յուսահատեցնող վիճակը աւելի սաստկութեամբ կը տիրէ նաեւ ՀԱՅԱՍՏԱՆԻ Հանրապետութեան մէջ՝ ամենաբարձր պաշտօնեացի մինչեւ հաւաքարարը: Ընդվզեցուցիչը այն է, որ ոեւէ մէկը, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ սփիւռքին տարածքին օձիքէն բռնելով պատասխանատուութեան եւ զգաստութեան չի հրաւիրեր խնդրոյ առարկայ անձերը: Աւելին՝ այս մասին չենք տեսներ որեւէ խօսք հայրենի մամուլին մէջ: Սփիւռքի

ցաւ..., ես քեզ վճարելու եմ, բայց քանի որ նոր արօտավայրեր ստեղծելու համար զգալի դժուարութիւնների առջեւ ենք կանգնած, ստիպուած եմ քեզ եւ քո ընտանիքին խոստացածս տարածութիւնից շատ աւելի փոքր տարածութիւն յատկացնել: Ստիպուած ես եւս մէկ տարի դիմանալ:

- Ի՞նչ... ի՞նչ... ի՞նչ, - ապշած ու զարմանքից քարացած Մայր ոչխարը ուրիշ ոչինչ չգտաւ ասելու, եւ միայն իր անգոր, թուլացած թաթերը առաջ պարզած՝ փորձեց յարձակուել տիրոջ վրայ:

Բայց ի՞նչ իմանար խեղճ Մայր ոչխարը, որ դիմացիներ՝ այդքան բարեհամբոյր ժպիտով տէրը ոչ թէ ոչխար էր, այլ՝ գայլ, ոչխարի մորթի հագած գայլ:

- Դո՛ւ, ապերախտ անասուն, - բղաւում էր տէրը, - ես քեզ վեց

մէջ մենք, քանի մը վերջին ասպետներս, Տոն-Քիշոթեան պաշար կը մղենք այս անհանդուրժելի երեւոյթին դէմ: Ֆրանսայէն Պրն. Յակոբ Պալեանը, Լիբանանէն Բժ. Արմենակ Եղիայեանը, ԱՄՆ-էն Բժ. Յակոբ Այնթապեանը, Յոփսէփ Նալպանտեանը, տողերուս հիղինակը, Գանտահարեան Վրէժ Արմէնը եւ շատ ուրիշներ:

Մեջ ԼՍՈՂ ՉԿԱՅ:

Ի՞նչ Արցախի պաշտպանութեան եւ Պատմական Հայաստանի ազատագրութեան, Հայ դատի ու միասնականութեան մասին կը խօսինք, երբ մեր ինքնութեան խարխիւներէն մէկը հանդիսացող մեր մայրենին կ'աղաւաղենք ու չենք կրնար մեզի աւանդուած երկու հայերէնները սրբութեան պէս պահել: Կրկնե՞նք Խորենացիի յայտնի «Ողբ» ի առաջին նախադասութիւնը.

- Ողբա՛մ գրեզ, Հայոց աշխարհ, որ...

* * *

Ծանօթութիւն-յաւելում.- Պէյրութի Պուրճ Համուտ արուարձանը 20-ական թուականներէն սկսաւ ուռճանալ հայրենիքէն աքսորուած եւ ցեղասպանութենէն մազապուրգ ազատած արեւմտահայութեան բեկորներով: Հասկնալի պատճառներով թրքախօսութիւնը տիրող լեզուն էր, հակառակ որ հոգիով եւ սիրտով հայեր էին ապաստանողները, որոնցմէ էին նաեւ իմ ծնողքս եւ անոնց ծնողքը: Ծնորհիւ Հայաստանեաց եկեղեցուց, միւս կրօնական յարանուանութիւններու, կուսակցութիւններու եւ միութիւններու ջանքերուն հիմնուած դպրոցներուն եւ ակումբներուն, հայախօսութիւնը յառաջացաւ մեծ թափով: Հակառակ ասոր սակայն մինչեւ 60-ական թուականները փողոցներուն եւ հիւղաւաններուն մէջ տակաւին թրքախօսութիւնը եւ թրքախօսութեան հայերէնը սովորական երեւոյթ էր: «Թուրքերէն խօսողին հայերէն պատասխանէ» լոզունգը կարեւոր գործ մը տեսաւ, աւելին՝ Պուրճ Համուտ սփիւռքահայութեան տուաւ մտաւորականներ եւ ճարտարագէտներ: Սակայն «Պուրճ Համուտի հայերէն» արտայայտութիւնը հոմանիշ դարձաւ խժողով հայերէն խօսուածքին:

Հետեւաբար մեր գրութեան մէջ մենք «Պուրճ Համուտ» ըսելով երբեք վարկաբեկելու միտք չունինք այս երբեմնի հայկական ուստանը, ընդհակառակը՝ կը մնանք շնորհակալ ու երախտապարտ:

ամիս աշխատանք եմ տուել, պայմաններ ստեղծել քեզ համար, խորհուրդներ տուել, բացատրել թէ ինչպէս օգտուել «կառավարական արօտավայրից», իսկ դո՛ւ, որպէս մի ապերախտ անասուն, դեռ դժգոհո՞ւմ ես...

Գայլը չէր նկատել, որ բազկաթոռից վեր ցատկելիս ու անգորչ շարժումներ անելիս, բացուել էին ոչխարի մորթու ծպտուած կոճակները:

- Լա՛ւ..., լա՛ւ..., տէր իմ, - փորձում էր արդարանալ Մայր ոչխարը՝ աչքը չկտրելով տիրոջից, - ես..., ես էլի կը սպասեմ, բայց..., բայց չեմ հասկանում տէր իմ, իմ օրինական խնդրանքը այդքան ազդե՞ց ձեր վրայ, որ..., որ..., ներեցէք, սկսում եմ ձեզ չճանա-

Պատանեկան Յուշերես «Այս Ո՞րքան Գիր Կարդացողը Կը Յոգնի Յապա Գրո՞ղը»

ԴՈԿՏ. ԶԱԻՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Արմաշի Յուշամատեանը


Պատանի էի, հազիւ 13 տարեկան, երբ հայրս Եղա Արզումանեան, իր գրողարանէն գիրք մը բերելով կը բանար եւ ինծի ցոյց կուտար եկեղեցականներու խմբանկար մը որ Արմաշի Դպրեվանքի առաջին ձեռնադրեալ եօթը հոգեւորականներու հունձքը կը ներկայացնէր, կեդրոնը նստած վերատեսուչ եւ ձեռնադրիչ Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան: Կ'ըսէր որ անոնք եօթը նորընծաներն էին Արմաշու Դպրեվանքին, ու «այս մէկը կը յիշեմ տեսած եմ երբ ես պատանի էի էվէրէկի Ս. Թորոս եկեղեցիին մէջ», ցոյց տալով Բաբգէն վարդապետ Կիւլէսէրեանը, որ Անկիւրիոյ Առաջնորդ եղաւ, եւ յետոյ՝ Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Գիրքը Արմաշու Դպրեվանքի 25-ամեակին յատուկ Յուշամատեան մըն էր 1914 թուին պատրաստուած Թորոս Եպիսկոպոս Գուշակեանի խմբագրութեամբ որ իմ մօտ տակաւին կը պահուի հօրս թողած հազուագիւտ գիրքերու շարքին: Խմբանկարը տպուած էր եւ իմ յիշողութեան մէջ մնաց սեւագգեստ վեղարուոր հայ երիտասարդ հոգեւորականներու խումբը՝ ձեռնադրուած 1895 թուին:

Յետագային հայրս կը պատմէր թէ Համաշխարհային Ա Պատերազմէն տարի մը առաջ Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան որպէս թեմի Առաջնորդ էվէրէկ կ'այցելէր ու եկեղեցույ մուտքին կը դիմաւորուէր խուռներամ հաւատացեալներուն կողմէ, եւ պատանի Եղիայի յիշողութեամբ, որ առաջին անգամն ըլլալով հայ Եպիսկոպոս մը կը տեսնէր, «երբ ան ձիւն իջնելով, իր ոտքերու փոշին կը թօթափէր եկեղեցույ դրան առջեւ, եւ եկեղեցի մտնելով կուտար իր քարոզը»: Հայրս զարմանալիօրէն կը յիշէր նաեւ Եպիսկոպոսին տուած քարոզին բնաբանը՝ «մի կալ հակառակ չարին»:

մը կրկին եւ կրկին անգամ կարդացած ըլլալս: Բառն էր «Եվէրսուրուս»: Երբ հօրս հարցուցի թէ ինչ կը նշանակէ, չեմ գիտեր ըսաւ: Յետագային մտքիս մէջ արձանագրուած այդ բառը նախ հաստատեց փոքր տարիքիս այդ գիրքը եւս իրապէս ձեռքս առած ըլլալս, եւ ապա կրկին կարդալով ու հասկնալով անոր օրուան Սրբազան Պապին Կոնդակին խորագիրն ըլլալը:

Տարի մը ետք երբ Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանի վեցերորդ կարգ անցայ, տնօրէնութեան շրջանաւարտ երիտասարդ մը Շահան Բագրատունի դասարան մտնելով հաղորդեց մեզի թէ արտօնուած էինք դպրոցին գրողարանը մտնել եւ գիրք մը առնել արձանագրելով մեր անունը, զայն տուն տանիլ ու կարդալ, եւ անպայման ապահով վերադարձնել գրողարան: Լսեցինք իբրեւ հպարտ եւ առանձնաշնորհեալ դասարանի աշակերտներ, եւ սակայն կարեւորութիւն չտուինք: Մեր դասագիրքերը հազիւ կը կարդայինք, մնաց որ յաւելեալ գիրք մըն ալ շարժէինք եւ տուն տանէինք: Նոյն երեկոյեան հօրս անցողակի ըսի թէ այս տեսակ բան մը ըսին մեզի:



Օրմանեան Պատրիարքի «Ազգապատում»ը

Առաւօտուն հայրս ըսաւ, «եթէ գրողարան երթաս հարցուր որ «Ազգապատում» անունով գիրքը ունի՞ր: Գրողն է Օրմանեան Պատրիարքը»: Ինձ համար այդ անունները մտովի մինչեւ դպրոց եւ գրողարան հասցնել շատ դժուար պիտի ըլլար: Միայն մականուններու նմանութիւնը միտքս պահելով եւ Օրմանեան անունը մտաբերելով հասայ եւ գրողարանի օրիորդին հարցուցի եթէ այդ անունով գիրք մը ունէին թէ ոչ: Փնտռեց ցանկին մէջ եւ ըսաւ որ կայ: Բերաւ հսկայ հատոր մը: Ինք զարմացաւ, ես սարսափեցայ:

«Այս խոշոր գիրքը պիտի կարդաս: Տո՞ւն պիտի տանիս: Ապահով կրնա՞ս վերադարձնել: Ուզեմ չուզեմ շարժեցի գիրքը, տուն տարի, եւ հօրս յանձնեցի իր ուզած եւ չտեսած Օրմանեան Պատրիարքի «Ազգապատում»ի հատորներէն մին: Հիացած, հայրս սկսաւ թղթատել մեծ գիրքը, «այս է եղեր Ազգապատումը, ինչ մեծ գիրք է», եւ ես հերոսաբար կը հետեւէի անհամբեր թէ ինչ նկարներ պիտի տեսնէի: Էջերը կը թաւալէին, ոչ

իսկ մէկ պատկեր այդ խոշոր հատորին մէջ: Գիրով գիր, մինչ հայրս հիանալով կը կարդար տող մը ասկէ տող մը անկէ, եւ ատեն մը ետք ըսաւ՝ «Այս ո՞րքան գիր, կարդացողը կը յոգնի, հապա գրողը»: Գիրքը մի քանի օր տուն մնաց եւ հայրս ըսաւ զգուշութեամբ վերադարձնել զայն գրողարան: Կը կարծեմ թէ այդպէս ալ ըրի: Սակայն ինք չկարծեց որ սա «մեր տղան», ինչպէս էվէրէկցիները սովոր են ըսել, օր մըն ալ այդ «Ազգապատում»ը շարունակողը պիտի ըլլար յիսնամեակ մը ետք, անձամբ պիտի շարեր անհատնում գիրքերը, ինք պիտի չյոգնէր գրելէն եւ շարելէն, սակայն պիտի յոգնեցնէր զայն ընթերցողը:



«Ազգապատում»ին Շարունակութիւնը
Լուռ մարգարէութիւն մըն էր կարծես եղածը: Հայրս պարեցաւ մինչեւ 87 տարեկան եւ սակայն չհասաւ տեսնելու Տէր Զաւէնին, իր զաւկին աշխատասիրութիւնը որ երբք ստուար հատորներով կազմեց շարունակութիւնը Օրմանեան Պատրիարքի երեք մեծածաւալ հատորներուն: Նոր հատորներուն իսկական նախաբանը «գրողը» հայրս եղաւ: Ուրկէ՞ ուր:

Անցած է քսանամեակ մը երբ առաջին հատորը լոյս տեսաւ, որուն յաջորդեց երկրորդը, եւ աւելի ուշ՝ երրորդ գիրքը, միասնաբար կազմելով քսաներորդ դարու Հայ Եկեղեցու պատմութեան հիմնարկը:

Գայլն Ու Ոչխարները

Շարունակուած էջ 12-էն

Ել...: Ներեցէք, տէր իմ, բայց քիչ է մնում, որ ձեզ մեր դարաւոր թշնամուն՝ գայլին նմանեցնեմ...
- Այո՞, այո՞..., ես կարող եմ գայլի նմանուել, երբ իմ ստորագասը փորձում է բան խնդրել ինձինց: Իսկ քեզ՝ ներում չկայ... դո՛ւրս այստեղից, դո՛ւրս, մէկ էլ չ'երեւաս...

Շուրաւ մայր ոչխարը գլխիկը դուրս եկաւ տիրոջ առանձնասենեակից՝ այդպէս էլ չհասկանալով, թէ իր օրինական խնդրանքը ինչո՞ւ պիտի այդպէս ազդէր տիրոջ վրայ, որ նա գայլոյթից պայթած՝ գայլի նմանուէր:


Այդպէս չհասկացան նաեւ իրենից յետոյ եկող բաւական թուով միամիտ ոչխարներ եւս: Եւ նրանք, ինչպէս եւ ինքը, դառը փորձութիւնից յետոյ եկաւ այն համոզման, որ հարկաւոր է յոյսը դնել միայն ու միայն սեփական ուժի վրայ:

Եւ այսպէս, յուսախաբ ոչխարները ժամանակի ընթացքում իրենց ուժերով, իրենց գառների օգնութեամբ սկսեցին մացառուտներից մաքրել չոր ու անապատ վայրերը, ջուր հասցնել հեռաւոր վայրերից, խոտ ու բոյս աճեցնել: Որոշ ժամանակ անց բարիքը հոսեց նրանց քնակարաններից ներս եւ նրանց կեանքը մտաւ բնական հունի մէջ:

... Ասում են, որ մինչեւ օրս էլ, ոչխարի մորթի հագած Գայլն ու Աղուհարը շարունակում են իրենց ճանկը գցել միամիտ ոչխարների,

դեցուց եւ ազգին փոթորկալից պատմութիւնը, հալածանք, ցեղասպանութիւն, Սովետական բռնատիրութիւն, բռնագաղթ, յետոյ աւելի թոյլատու վիճակ եւ վերջապէս պետական անկախութիւն: Այս բոլորը հետեւողութեամբ մեծանուն պատմաբան Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի «Ազգապատում»ին որպէս միացեալ Դ Հատորը՝ գլխակարգութեամբ չորս մեծագործ Հայրապետներու՝ Գէորգ Ե Սուրենեանց, նահատակ Խորէն Ա Մուրաթեան, Գէորգ Զ Չորեքեան եւ Վազգէն Ա Պալճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսներու:

Նորագոյն երեք հատորները հրատարակուեցան Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Հովանաւորութեամբ, Հայրապետական Օրհնութեան Գիրովը Ամենայն Հայոց Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի, հրամանաւ Թեմի Առաջնորդ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի եւ մեկենասութեամբ «Զգօն Եպիսկոպոս Տէր Յակոբեան» գրական հիմնադրամին:



Օրմանեան Պատրիարքի «Խոնք եւ Խօսք»ը

Շատ չանցած հայրս գիրք մը եւս ձեռքս կուտար որ թղթատեմ, այս անգամ Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի «Խոնք եւ Խօսք» անուն իր վերջին գիրքը: Լաւ կը յիշեմ իմ նիհար հայերէնովս շատ բան չհասկնալս, էջերը արագ արագ դարձնելս, եւ հայատառ լատիներէն բառ

Քաղցրիկ Պուրճ-Համնուտ(3)

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ

Պուրճհամնուտի ամեն մանուկ եռալեզու դարձած կը դիմաւորէր գիտակցական տարիքը. ան իւրացուցած կ'ըլլար արդի հայերէնը, որ մասնաւորաբար դպրոցին մէջ կիրարկուողն էր, բարբառ մը, որ յատուկ էր տան մէջ ապրող մեծօր մը կամ մեծմօր մը, եւ թրքերէնը, որուն մենք նոյնքան կը տիրապետէինք, որքան հայերէնին, երբեմն նոյնիսկ աւելի լաւ: Կային տղաք, որոնք միայն դպրոցը հայերէն կը խօսէին, իսկ ժամանակին մնացեալ մասը թրքերէն կը հաղորդակցէին թէ՛ տան մէջ, թէ՛ փողոցը, մանաւանդ եթէ կու գային թրքախօս ընտանիքէ:

Ուրեմն կային նաեւ հայախօս ընտանիքներ եւ թրքախօս ընտանիքներ:

Իմս հայախօս էր, եւ չեմ չիշեր որեւէ առիթ, ուր հայրս կամ մայրս կամ մեծմայրս թրքերէն դիմած ըլլային մեզի: Սակայն հակառակ ասոր՝ մենք՝ հինգ քոյր-եղբայր, սահուն կը խօսէինք թրքերէնը, որուն կը տիրանայինք փողոցը եւ մեր շուրջը գտնուող թրքախօս հասակակիցներէ, հիւրերէ, խանութպաններէ, փերեզակներէ, արհեստաւորներէ, պատահական անցորդներէ, քիչ մը բոլորէն:

Գալով բարբառներուն, ամէն ընտանիք ունէր իրը, որ կը գործածէր միայն տան մէջ՝ մեծօր կամ մեծմօր հետ, երբեմն մինչեւ իսկ հօր ու մօր հետ, ու հոն ալ կը մնար ան: Բացառուած չէր, որ մեզմէ ոմանք յաջողէին սորվիլ նաեւ անմիջական դրացիին տան մէջ խօսուող բարբառը:

Ժամանակին հետ այդ բառբառները հետզհետէ կորսուեցան, երբ գանոնք խօսող երէցները չմնացին. այսօր ամբողջ սփիւռքի մէջ որոշ կենսունակութիւն ունի Մուսալեռի բարբառը միայն՝ Անճարի մէջ, իսկ արեւմտահայ միւս բարբառները անհետացան: Մօտաւորապէս նոյն ընթացքին հետեւեցաւ թրքերէնը, թէեւ գայն խօսողներ, մանաւանդ գիտցողներ, բաւական կը գտնուին մինչեւ հիմա ալ:

Մեծ բացական արաբերէնէն էր, քանի մեր առօրեայէն բացակայ էին իրենք՝ արաբները եւս: Ամբողջ Պուրճ-Համնուտի մէջ կ'ապրէին երկու արաբ ընտանիքներ՝ քաղաքապետարանի քարտուղարին եւ Մար-Եուսեֆ եկեղեցւոյ ժամկոչինը: Մնացեալները մենք էինք ու մերոնք եւ կ'ապրէինք մեր եկեղեցիներով, դպրոցներով, ուր բոլոր նիւթերը հայերէն կը դասաւանդուէին, խանութներով եւ արհեստանոցներով, ուր ծառայողները գրեթէ միայն հայեր էին՝ դերձակներ, կօշկակարներ, ատաղձագործներ, երկաթագործներ, դարբիններ, բրուտներ, մինչեւ անգամ...պայտարներ, այդ, պայտարներ, - նոյնիսկ հեռաւոր ու մեզի անծանօթ շրջաններէ տեղացիներ իրենց գրաստը կը բերէին եւ Պուրճ-Համնուտի մէջ լուսնել կու տային: Ես մինչեւ հիմա ալ չեմ մոռնար անոնցմէ մէկը, որ Լեւոն կը կոչուէր:

Չոր, նիհար մարդ մարդ մըն էր ան, հաւանաբար 50-ի շուրջ, ունէր տարեկից օգնական մըն ալ: Այս վերջինը կը վառէր կաւաշէն փոքրիկ քուրան, որուն մէջ վարպետը կը դնէր մետաղեայ ձող մը, մօտաւորապէս մէկ թիզ երկարութեամբ: Աշկերտը քուրային կրա-

կը յարատեւ կ'արծարծէր փքոցով մը, եւ ահա երկաթը հետզհետէ կը շիկանար: Լեւոն մետաղեայ երկարակոթ ունելիով մը կը բռնէր գայն, կը դնէր սալին վրայ, որ հաստատուած կ'ըլլար կոճղի մը գագաթը, մօտ 70-80 սանթիմ բարձրութեամբ, ու կը սկսէր նախ կիսաշրջանակ ոլորել գայն: Մէջընդմէջ երկաթը կը վերադառնար դէպի քուրայ ու կը վերաշիկանար: Ապա կամաց-կամաց կը տափակցնէր գայն, եւ այսպէս կը ձեւանար պայտը: Որմէ ետք դուրի մը օգնութեամբ, դա՛րձեալ շիկացնելով գայն, կը բանար զանազան ծակեր:

Պատրաստ պայտերը կը կախուէին պատին վրայ:

Եւ ահա կու գար գրաստատէր մը, ընդհանրապէս ձիապան մը:

Օգնականը կ'անշարժացնէր ձին, կ'ոլորէր անոր առջևի ոտքերէն մէկը, եւ վարպետը խոշոր աքցանով մը կը քաշէր մաշած պայտին գամերը, որոնք շատ դժուար դուրս կու գային սմբակէն: Ապա կ'անցնէր միւսին...: Քակուած պայտերուն տեղը ձիուն եղունգը սեւցած ու մաշած կ'ըլլար. Լեւոն կիսաշրջանակաձեւ դանակով մը կը քերթէր եղունգին այդ մասը, որ շերտ-շերտ գետին կը թափէր: Այդ շերտերէն ոմանք երբեմն մինչեւ 7-8 սանթիմ երկայնք կ'ունենային եւ աւելի քան կէս սանթիմ հաստութիւն:

Երբ լման հեռացնէր մաշած եղունգը, խոշոր խարտոցով մը կը յղկէր տեղը, կը հարթէր գայն, որպէսզի հանգիստ նստի նոր պայտը, որմէ ետք կը սկսէր յարմար չափի մը ընտրութիւնը: Ասոնք ալ պատրաստէիք ետք կը հասնէր ամենասուկալի արարը, որ էր պայտերու ամրացումը սմբակին վրայ:

Այդ մէկը տեղի կ'ունենար շնորհիւ խոշոր գամերու, մօտ 8-10 սանթիմ քառանկիւն սեպեր, մատիտի տրամագիծով, խոշոր գլուխներով, որ նոյնպէս պայտարը պատրաստած կ'ըլլար: Ահա այս գամերն է, որ պարտէր միւրճել ծակերուն մէջ: Ես սոսկուսով կը դիտէի այս վերջին գործողութիւնը, քանի ամէն վայրկեան կը կարծէի, - հակառակ փորձառու-

թեանս, - որ ան պիտի միւրճուէր անասունի միսին մէջ, մինչ ան անտարբեր կ'ենթարկուէր վարպետի հարուածներուն:

Սմբակը կոնաձեւ ըլլալուն՝ գամերուն ծայրերը յաճախ մէկերկու սանթիմի չափ դուրս կու գային անկէ. վարպետը կը կտրէր այդ մասերը, խարտոցով կը հաւասարեցնէր եղունգին եւ կ'աւարտէր գործը. խորունկ շունչ մը կ'առնէի ու կը հանգստանայի, ինծի հետ ալ ձին, որ լիաթոք կը խրխնջէր:

Նոր պայտ ունեցող ձին կարծես աւելի առոյգ, աւելի աշխոյժ ու կենսունակ երեւոյթ մը կը մատնէր եւ ոտքերով կայտառօրէն կը դոփէր գետինը՝ նոր կօշիկ ստացած մանուկի գոհունակութեամբ:

* * *

Եւ վերջապէս Պուրճ-Համնուտի պղնձագործները...

Արդի հայը որոշ չափով պատկերացում ունի վերոնշեալ արհեստներուն մասին, սակայն չեմ կարծեր, թէ ձեզմէ մէկը գիտնայ՝ ինչ է պղնձագործը: Այս արհեստը կիրարկողներու երկար արք մը հաստատուած էր Արաքս թաղի կունակը՝ աջին, որ անցած դարու յիսունականներուն ազատ տարածութիւն մըն էր մինչեւ գետը: Պղնձագործները կ'ունենային ընդամէնը երկթակ մուրճ մը եւ պողպատեայ սալ մը, որ գետնէն հագիւ թիզ մը բարձր հաստատուած կ'ըլլար: Ասոնք գետինը նստած կ'աշխատէին, եւ անոնց միակ ատաղձը պղնձեայ թերթերն էին՝ զանազան հաստութեամբ: Այդ թերթերը շրջանակաձեւ կը կտրէին ու կը սկսէին ձեւաւորել՝ սալին վրայ ծեծելով գանոնք: Երկաթը ու տաժանագին աշխատանք մըն էր այս, որուն շնորհիւ անդուլ թակուող պղնձեայ սկաւառակը մեր պաշտօնը աչքերուն առջև կամաց-կամաց ձեւ կը ստանար՝ դառնալու համար բաժակ մը, սրճաման մը, պնակ մը, տապակ մը, սան մը, խալկին մը, փարջ մը, կաթսայ մը, տաշտ մը, սկուտեղ մը կամ որեւէ այլ ընդունարան: Ասոնք բոլորը կը դրկուէին քիչ անդին գտնուող կլայագործներուն, որոնք բորբ կրակին վրայ լաւ մը կը տաքցնէին գանոնք, ապա անագով կ'օծէին անոնց ներքին մակերեսը միայն, յետոյ քուրջով մը կը շիփէին գայն,

եւ կաս-կարմիր պղինձը կը գունափոխուէր ու կը սկսէր երեսիդ ժպտիլ պսպղուն հայելիի պէս, որուն մէջ կրնայիր պատկերդ տեսնել:

Ափսո՛ս, քանի մը տարի ետք այդ արուեստն ալ կորսնցուց իր հմայքն ու թափը, երբ ալումինիումէ պատրաստ սպասները ողորդեցին շուկան՝ մանաւանդ կանխելով թունաւորումի հաւանականութիւնն ալ, որ պղինձին մէկ մնայուն վտանգն էր:

Յատուկ յիշատակութեան արժանի են նաեւ հայ շինարարները՝ իրենց վարպետներով ու ճարտարապետներով: Անոնց մեծ մասը կ'ապրէր խրճիթներու մէջ. սակայն համեստ օրապահիկի մը սիրոյն կը ծառայէին տեղացիներու քարաշէն բնակարաններու, դղեակներու եւ պանդոկներու կառուցումին: Աւելի ուշ է որ անոնք իրենց տեղը գիշեցան սուրիացի բանուորներուն եւ ուրիշ օտարականներու:

* * *

Պուրճ-Համնուտի մէջ կը գործէին չորս մարդասիրական հաստատութիւններ:

Ասոնցմէ մէկը դարմանատուն մըն էր, Մեսրոպեան վարժարանին կից, որ կը տնօրինէր ֆրանսացի քոյր մը՝ Mere Blanche անունով. միջին տարիքի, լեցունկեկ, չաղթանդամ, անդիկի պէս շարժուն եւ եռանդուն, համակ ժպիտ ու քաղցրութիւն՝ ան բոլորիս հոգածու հրեշտակն էր, անունին տէրը՝ իսկական մայր մը:

Միւսը Գարակէօզեան հիմնարկն էր, որ նախախնամական դեր ունեցաւ հայ մանուկներու սնունդի եւ առողջապահական կարիքներու մատակարարման մէջ:

Ապա՝ Ծերանոց-այրիանոցը եւ Կուրանոցը, Նոր Սիսի եւ Նոր Ատանայի հատման կէտին վրայ, որոնք հիմնադիրները, մատակարարները եւ երկսեռ անձնակազմի վերին շերտը գուցեք իրացնել էին, որոնք սակայն...մաքուր հայերէն կը խօսէին: Այս աւանդույթը շարունակուեցաւ մինչեւ այն օրը, ուր գուցեք իրացի վերջին հայախօս տնօրէնը՝ Մր. Յիգլերը, հեռացաւ Լիբանանէն՝ իր հետ տանելով հայ կիներն ու հայախօս գաւաղները:

armenag@gmail.com

Pasadena Unified School District
Armenian Dual Language Immersion
High School Program. (DLIP)

The program will be located at Blair School, home to PUSD's International Baccalaureate programs.

Register Now!





Armenian Dual Language Immersion Program

2020-2021 Registration for the Armenian Dual Language Immersion High School Program at Blair is now open!



PASADENA UNIFIED SCHOOL DISTRICT
 Our Children. Learning Today. Leading Tomorrow.

626-396-3606
openenrollment.info

ՄԱՐԱԶԴ



ԱԼԻՍ ՍԻՄՈՆԻԱՆ

(Ծնեալ՝ Յուլիս 10, 1935ին, Լաթաքիա, Սուրիա)

Սրտի դառն կակիծով կը զուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ, խնամիին եւ հարազատին՝ Ալիս Սիմոնեանի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 19 Յունիս 2020ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 30 Յունիս 2020ին, կէսօրէն ետք ժամը 12:30ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, 500 S. Central Ave., ապա թաղումը՝ Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Զաւակը՝ Գէորգ եւ Լուսինէ Հալէպլեան եւ զաւակները՝ Նարեկ-Եղիա եւ Արենի
- Դուստրը՝ Սիւզի եւ Գաբօ Իսհակեան
- Թոռները՝ Շաղիկ եւ Արփա Պահարեանս եւ զաւակները
- Սարին եւ Անտրէ Նազարեանս եւ զաւակները
- Եղբայրը՝ Փիեռ եւ Ասպետուհի Սիմոնեան եւ զաւակները՝ Սէմ, Հրայր, Հայկ եւ Շանթ
- Եղբօր կինը՝ Զապէլ Սիմոնեան եւ զաւակները՝ Սէմ, Պերճ, Սեդա, Արա
- Եղբօր կինը՝ Անի Սիմոնեան եւ զաւակները՝ Սէմ, Արա, Մարալ
- Եղբօր կինը՝ Նուէր Սիմոնեան եւ զաւակները՝ Սէմ, Մարիէթ, Սիլվա, Ռիթա
- Խնամին՝ Վահագն եւ Կարինէ Կիրակոսեան եւ զաւակները՝ Գայիանէ եւ Էմիլ
- Եւ համայն Հալէպլեան, Սիմոնեան, Իսհակեան, Շէօճէլեան, Պամաճեան,
- Եանըքեան, Աբարտեան եւ Աղամեան ընտանիքներն ու հարազատները

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Armenia Fund -ին
(In memory of Alice Simonian, 111 N. Jackson Ave. Unit 205, Glendale, CA 91206):

ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



Նորոգ հանգուցեալ՝ Մարտիկ Փափազեանի մահուան քառասունքին եւ Ռաֆֆի Փափազեանի մահուան 8-րդ Տարելիցին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի 28 Յունիս, 2020, Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝ 2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107:

Խնդրողներ՝
Ծնողքը՝ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Սիլվա Փափազեան

առիթով մը նոյնիսկ սպառնալով անոր տնտեսութիւնը ծուկի բերել: Սակայն, իրողութիւնները այլ պատկեր կը ներկայացնեն եւ կողմերուն միջեւ կը գործեն անհասկնալի կապեր:

Ոմանց կարծիքով Թրամփ-Էրտողան յարաբերութիւններուն մէջ դեր կրնան ունենալ Ամերիկայի նախագահի տնտեսական շահերը Թուրքիոյ մէջ: »Թրամփ« անունը կրող երկու աշտարակներ կան Պոլսոյ մէջ եւ այս երկու բարձրաշար կէտքերը Թրամփի ընտանիքին կ'ապահովեն տարեկան իւրաքանչիւրը 1-5 միլիոն տոլար, ըստ պաշտօնական յայտարարագրերու: Իր հակա-ամերիկեան ելոյթներէն մէկուն ընթացքին Էրտողան սպառնացած էր Թրամփի անունը հանել այդ աշ-

տարակներէն:

Միւս կողմէ, Ամերիկեան մամուլի համաձայն Թուրք պետական պաշտօնեաներ 14 առիթներով այցելած են Սպիտակ Տան մօտ գտնուող «Թրամփ Սիջազգային Հիւրանոցը» եւ հոն կազմակերպած են պետական մակարդակի չորս միջոցառումներ ու ծախսած մեծ գումարներ:

Ամերիկայի եւ Թուրքիոյ նախագահներուն միջեւ սերտ շփումները եւ այն իրադարձութիւնները, որոնք տեղի կ'ունենան այդ յարաբերութիւններու լոյսին տակ, ենթադրել կու տան որ, Տանուլտ Թրամփ կ'առաջնորդուի իր անձնական շահերով եւ ոչ թէ երկրի ազգային շահերով, որոնց ծառայելու երդում տուած է ան:

«ՄԱՍԻՍ»

Ինչ է Գաղտնիքը՝ Թրամփ-Էրտողան Սերտ Յարաբերութեան

Շարունակուած էջ 1-էն

միլիառ տոլարի գործարքներ ընելու մէջ: Ըստ Պոլթընի, Թրամփ խոստացած է այդ հարցով օգտակար ըլլալ, սակայն ժամանակ խնդրած է: «Հարցը կը գտնուի Նիւ Եորքի Հարաւային Շրջանի Դատախազութեան մօտ եւ անոնք իմ մարդիկը չեն: Նշանակուած են Օպամայի կողմէ», ըստ Պոլթընի, ըսած է Թրամփ ու աւելցուցած, որ այդ պարագան շուտով պիտի շտկուի, երբ հոն իր մարդիկը նշանակուին:

Նախագահ Թրամփ ընդառաջելով Էրտողանի խնդրանքին, փորձեց նաեւ ձախողցնել Հայկական Յեղասպանութեան ճանաչումը Ամերիկեան Գոնկրէսին կողմէ, սակայն Ներկայացուցչներու Տան եւ Ծերակոյտի անդամները մնացին անդրդուելի:

Ամերիկացի քաղաքական շրջանակներու մօտ հարց կը ծագի, թէ ի՞նչ է պատճառը որ, Թրամփի եւ Էրտողանի միջեւ յաճախ տեղի կ'ունենան հեռաձայնային զրոյցներ եւ ԱՄՆ-ի նախագահը կ'ընդառաջէ անոր պահանջներուն: Այս առթիւ կը յիշուի անցեալ Հոկտեմբերին կայացած մէկ

այլ նման զրոյց, որմէ ետք Թրամփ, հակառակ Փենթակոնի ղեկավարութեան խրատներուն, անակնկալ որոշում կայացուց եւ Ամերիկեան զօրքերը Սուրիոյ Հիւսիսային շրջաններէն դուրս բերելով առիթ տուաւ որ, Թրքական բանակը գրաւէ Քուրտերու հսկողութեան տակ գտնուող տարածքներու մէկ մասը:

Իր ընտրութենէն ասդին Թրամփ օտար երկիրներու ղեկավարներուն մէջ ամենէն աւելի հեռաձայնային խօսակցութիւն ունեցած է Էրտողանի հետ՝ մօտ 20 անգամ: Թէ ի՞նչ եղած է այդ խօսակցութեանց բովանդակութիւնը, մեծ մասամբ կը մնայ առեղծուած: Այս սերտ շփումները զարմանալի եւ անբացատրելի կը թուին, երբ նկատի ունենանք որ հակա-ամերիկեան հռետորական ելոյթներու պակաս չկայ Թուրքիոյ նախագահին մօտ, ու ան անդադար կը դիրքորոշուի Ամերիկեան քաղաքականութեան դէմ եւ աշխարհի մէջ ընթացող կարեւորագոյն իրադարձութիւններուն ժամանակ կը պաշտպանէ Ամերիկայի հակառակորդներուն տեսակէտները: Թրամփ իր կարգին հրապարակաւ կը քննադատէ Թուրքիան,

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Հաճընցի Վերապատուելի Տիգրան Համբարձում Ռեճեպեան

Շարունակուած էջ 11-էն

է: Բարեկամն ու բարեկամութիւնը, ճշմարիտ, անկեղծ, սրտանց եւ հաւատարիմ ըլլալու է:

3- Հոգ մի ըներ եւ լաւատես եղիր:

4- Երջանկութեան վրայ խորհէ: Խորհուրդներդ եւ մտածումներդ երջանիկ եւ ուրախ թող ըլլան:

5- Ինքնավստահութիւն ունեցիր:

6- Մառաջութեան կեանք մը ունեցիր:

7- Աստուծոյ հաւատք ունեցիր. Սիրէ Աստուած, Սիրէ մարդկութիւնը:

Ամուսնացած զոյգերու ընտանեկան կեանքին երջանկութեանը համար ներկայացուցած կարեւոր կարգանքներն են՝

1- Գիտնալ սիրել ու գոհուել եւ չքննադատել զիրար.

2- Անկեղծ գնահատել եւ գովեստ տալ.

3- Քաղաքավար ըլլալ իրարու հետ.

4- Հաճելի բաներ ընել.

5- Համաձայն ըլլալ եւ սխալները ընդունել.

Կեանքի մէջ յաջողութեան համար Մեծ գաղտնիքներ են՝

1- Աղէկ նկարագիր մը ունենալ պէտք է:

2- Անձնաքննութիւն, քաղաքավարութիւն եւ կենցաղագիտութիւն պէտք է:

3- Աշխատասիրութիւն եւ խնայողութիւն պէտք է:

4- Ինքնագաղտնիքներ պէտք է:

5- Արժանապատուութիւն պէտք է:

6- Կեդրոնացում պէտք է: Ժողովրդական ըլլալու համար Օրէնքներ են՝

1- Մի՛ մոռնար որ, ազնիւ մէկը ըլլալու ես եւ ուրիշները քննադատելու չես:

2- Մի՛ մոռնար որ կենցաղագիտութիւն եւ ժպիտ ունենալու ես:

3- Ուրիշներուն օգտակար ըլլալու ես:

4- Հաճելի, Քաղաքավար, Մտախոհ եւ խոհեմ ըլլալու ես:

5- Արժանապատուութիւն եւ ծանրութիւն ունենալու ես:

6- Մի՛ մոռնար որ համագործակցութիւն ունենալու ես:

Առաջնորդ ըլլալու համար կարեւոր պայմաններ են՝

1- Յիշէ որ ծառայութիւն ընելու ես,

2- Յիշէ որ զօրաւոր կամք եւ ինքնավստահութիւն ունենալ պէտք է:

3- Յիշէ որ խոհեմ ըլլալ եւ համոզումի քաջութիւն ունենալ պէտք է:

4- Արժանապատուութիւն եւ ծանրութիւն ունենալ պէտք է:

5- Հրապուրիչ եւ գրաւիչ անձնականութիւն մը ունենալ պէտք է:

6- Յիշէ որ կարողութեան տէր ըլլալ պէտք է:

7- Յիշէ որ տեսիլք ունենալ պէտք է եւ դիւանագիտութիւն:

Հարստութեան համար 2 կարեւոր դիտողութիւններ եւ 2 գլխաւոր պայմաններ են՝

Ա. Բաներ կան, որ դրամէն աւելի կարեւոր են:

Բ. Դրամ ունի, բայց նորէն աղքատ է ան մարդը եթէ ուրիշ կարեւոր բաները չունի:

Հարստութեան գլխաւոր 2 պայմաններն են՝

Աշխատասիրութիւն եւ Խնայողութիւն:

Գիրքին Բ. Մաս

Հետեւեալ ոտանաւորը հայրս՝ Պօղոս Կանաչեան՝ գրած եւ նուիրած է Վերապատուելի Ռէճեպեանին, (1948թ.) իր քերայրին՝ 77- Ամեակին առիթով:

ԹՈՒՐՔԵՐՈՒ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԱԾ

Մաղթանքներս իմ սրտագին, իմ սիրելի Քերայր անգին, Եօթնասուն Եօթնամեակին, Ձեր շնորհից Աստուած բարին: Դու Ռեճեպեան գեղարարու, Ձաւակը մեծ հայրենասէրի, Պայքարած ես դէմ թուրքերու, Բարձրահամբաւ քաջ Հաճընցի: Եղած ես դու կղերական, Հոգի բարի ժողովրդեան, Նաեւ գործիչ քաղաքական, Ազգի սիրուած անգին խորան: Թէեւ հիմա հեռու քեզմէ, Կը գրեմ քեզ օտար երկրէ, Աստուածերկար կեանք պարգեւ, Իր պսակին արժանացնէ:

1948թ. հաճընցի հայրենակից «Նոր Հաճըն» եւ «Շարժում» թերթերու խմբագիր՝ Աբրահամ Էօլմէսէքեանի խօսքէն հատուածներ:

Ան կը գրէ. «Րէճեպեան գերդաստանը ազգին տուած է օգտակար գաւակներ: Բժիշկ, Տնօրէն, դեղագործ եւ գործակատար: Մեր յոբէլեարը՝ հոգեւոր եւ ազգային գործիչ էր, նաեւ պերճախօս-հռետոր: 1903-1905 վարած է Թարսուսի ձէնանեան որբանոցի տնօրէնութիւնը: 1910-ին, Ատանայի կոտորածին առեւ ջարդուած հաճընցի քարոզիչներուն եւ Կիլիկիոյ դաշտին մէջ կոտորուող ժողովուրդի յիշատակին 1200 հոգինոց ժողովին ան ազդեցիկ ճառ կը խօսի եւ վերջին տողը կ'ըլլայ. - սիրելի ժողովուրդ, նախ Աստուծոյ փարեցէք եւ յետոյ գէնքին:

Իր ժամանակի Առաջնորդները կ'ըսէին, -Կիլիկիոյ բողոքական պատուելիներուն մէջ միակ քաջը, ազգասէրը, մայրենի եկեղեցին սիրողը եւ յեղափոխականը Վերապատուելի Ռէճեպեանն է: Երբ հօրը կ'արեւանգեն՝ կը յայտարարէ, թէ եթէ հայրը չի գտնուի Հաճընի բոլոր թուրքերը ջարդել կ'ուտայ:

1913-1914 Վերապատուելին Հնչակեան կուսակցութեան Հաճնոյ մասնաճիւղի ատենապետն էր: Թուրք կառավարութիւնը Վերապատուելիին եկեղեցիին մէջ յեղափոխական ճառը, Փաշային վրայ պողալը, ժանտարմաներուն վրայ ատրճանակով յարձակիլը, եւ կուսակցութեան ատենապետ ըլլալը նկատի ունենալով կ'որոշեն կախաղան հանել քանի մը հաճընցիներու հետ: Այս մասին կը յայտնէ Կարապետ Կիրգիրեան եւ Վերապատուելին կը փախչի Ամերիկա, սակայն Կիրգիրեան կը նահատակուի: Յետոյ արդէն կը սկսի հալածանքը:

1936-ին կը քաշուի գործէ եւ երէցկիւնին հետ խոր ծերութեան մէջ խաղաղ կեանք մը կ'անցնէ:

Գիրքին մէջ գրուածքներ կան որ նուիրուած են իր Տօքթ. եղբօրը՝ Յակոբի յիշատակին: Գրողներէն են՝ Տօքթ. Ա. Նազաչեան, Գ. Պ. Գուշեան եւ Փրօֆ. Գր. Հ. Գալուստեան, որոնք վկայած են անոր մասին, թէ ան եղած էր մաքրամիտ ու մաքրասիրտ, անկեղծ, գուարթ եւ հաճոյակատար անձ մը, իր անունին կցուած ածական մը ունեցած է - «Լաւ մարդ է»: Իսկական հայ էր, ծառայասէր ու կարօտեալին հասնող, անշուղի բարեցործ, ազատատենչ, հայրենասէր, անձնուէր դաստիարակ, ճարտար վիրաբույժ...:

Վերապատուելի Սամուէլ Մ. Ռէճեպեան գրած է. «Տօքթ. Յակոբի մահովը Ռէճեպեան գերդաստանի ամենափայլուն աստղը մարեցաւ եւ Հաճնոյ հոյակապ դէմքէն մին անհետացաւ:

Հաճըն քաղաքը անով պարծենալու շատ պատճառներ ունեցաւ Ան Հաճըն, Ատանա, Թարսուս եւ Մերսին քաղաքներու մէջ առաջնակարգ բժիշկ մը կը նկատուէր եւ մինչեւ իսկ Ամերիկայի մէջ ալ մեծ եւ բարի համբաւ ունէր: Նախաինամական դեր մը կատարեց Գոնյայի ձէնանեան գօլէճի համար (պահեց գօլէճը): Գոնյայի հայութեան եւ Աւետա րանական համայնքին շատ օգտակար եղաւ...:

Վերապատուելի Ռէճեպեանի գիրքը տեղեկութիւններ կու տայ նաեւ Հաճընի մասին, հաճընցի ընտանիքներու մասին, կարեւոր եւ երեւելի մարդոց մասին...:

Գիրքը իր աւարտին հասցնելով ան կը գգայ թէ իր «Իմ 80 Տարուան Կեանքիս Յուշերը» գիրքը՝ իր վերջին գրութիւնը պիտի ըլլայ, եւ կեանքին ամենավերջին յօդուածը: Ան համոզուած ըլլալով, որ կեանքը աւելի երկար ապրիլ չարժէր կը նախընտրէր մտնել՝ յաւիտենական երջանկութեան կեանքը:

Վերապատուելի Ռէճեպեան կ'անդրադառնայ մեծ Յաղթութիւններու:

Կը գրէ. «Յաղթութիւն շահողը, թէ սրտի գոհունակութիւն մը ունի, եւ թէ ուրիշներէն մրցանակներ եւ գովեստներ կը շահի»:

Հետեւեալ Յաղթութիւնները կը յիշէ:

-Յաղթութիւն է, փոթորիկի մէջ հանդարտ կենալ ու համբերել. -Պօղոս առաքեալ կ'ըսէ. - Յաղթութիւն է մեզի պատահած բոլոր բաները Տէրոջը կողմանէ դրկուած ընդունիլ: (Հրովմ. 8.28):

-Յաղթութիւն է, լոյս չերեցած պահուն յուսալ եւ ուրիշ յաջողութեան վրայ ուրախանալ:

-Սողոմոն իմաստուն կ'ըսէ. - «Յաղթութիւն է, քաղաք առնելէն աւելի, ոգին զսպել»: (Առակ. 16. 32):

Կեանքի ասպարէզին մէջ յաղթութիւն շահելու համար՝ մարդ

1. Աստուածավախ եւ կրօնասէր ըլլալու է:

2. Իր անձին յաղթող ըլլալու է:

3. Գաղափարականի տէր, ծրագրի կամ մեթոտի մարդ ըլլալու է:

4. Անձնաքննութիւն ընելու է:

5. Արժանապատուութիւն ձանչնալու է:

6. Նպատակի տէր անձ մը ըլլալու է:

7. Փառասիրութիւն (ambition) ունենալու է:

8. Յառաջադէմ ըլլալու է եւ ինքնավստահութիւն ունենալու է:

9. Առողջ մարմին, գործունեայ եւ արթուն միտք ունենալու է:

10. Քաջ, անվախ, անկախ եւ ինքնիշխան ըլլալու է:

11. Կեանքի մէջ սկզբունքներ ունենալու է:

12. Անձնականութիւն եւ ժողովրդականութիւն ունենալու է:

Մ.Ս. Գասբարեանի Ներբողագիրը՝ որպէս վերջաբան.

«Արժանապատիւ Հնչակեան ընկեր

ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆ ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՅՐԻԿԻՆ

Քաջ եւ Հնչակեան գաղափարակից Պատուելի Ռէճեպեանի սոյն կենսագրականը, որ իր հմտալից խրատականներով, իր կեանքին արժէքաւոր անցեալի ազատամարտ դրուագներով, բարոյատիպ կեանքով, եւ առաւելապէս դիւցազն Հաճընի եւ անոր անվեհեր հերոսներուն մտքի, սրտի ու գրչի մշակներուն դրուատիքներով՝ իր 80-ամեայ տարեդարձին նուիրուած՝ Յուշարձան մըն է. մեծ հրճուանքով կարգացի այն կէտը որ Պատուելի Ռէճեպեան թուրք գազան բռնակալութեան դէմ ըմբոստ եւ ազատասէր իր հոգիով յիշեցուցինձ ա՛յն Հայ բարձրհայրենասէր կօնաւորները՝ որոնց անունը կը փայլի վսեմ պատմութեան մէջ: Այս գիրքը առաւել իմաստ ունի անով, որ հոն յիշուած են շարք մը արժէքաւոր անձերուն մշակութային գործունէութիւնները, այս անձերուն ալ տեղ տալով՝ իր այս գիրքին մէջ՝ բացառիկ յանգամանք մը եւ աննախընթաց մըն է որ կ'աւելցնէ արժանիքը այս գիրքին: Պատիւ Պատուելի Ռէճեպեանի եւ իր իմաստալից կեանքին, յարգանք անոր 80-ամեայ Յոբէլեանին:

COVID-19 HOTLINE (888) 908-1887 contactus@aebu.org